

Գ Յ Ո Ւ Ղ Ա Կ Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն

Լ. ՄԻԶՈՆԴՐՈՆՑԵՎ, ՅԵՎ Է. ՅԻՆՈՎՍԿԻ

Գ Յ Ո Ւ Ղ Ի Ց Ե Ց Ե Ր

ՅԵՐԱՅՆՏԱԿԱՆ ԿՈՄԵՏԻԱ 7 ՊԱՏԿԵՐՈՎ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИКО-ЭТНОГ.  
ЛЕНИНСКИХ ИССЛЕД.  
СССР

Յ 91.71

Կ- 67

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Է Ր Ո Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1981

91.71

67

32-7  
A  
68

L. ՄԻՋՈՆԴՐՈՆՑԵՎ ՅԵՎ Ն. ՑԻՆՈՎՍԿԻ

30 SEP 2006


25 NOV 2010

# ԳՅՈՒՂԻ ՑԵՑԵՐ

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱ 7 ՊԱՏԿԵՐՈՎ

Ռուսերենից փոխադրեց՝ Կ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



23 JUN 2013

12132

0105 400 25

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿ. 1733  
ԳԼԱՎԼԻՏ 6576 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 3731  
ՏԻՐԱԺ 4000



6/189-62

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

1. ԸՆԿ. ՎԱՐԴԱՆՈՎ.—Բագվի բանվոր .
2. ՅԵՂՍԱՆ ԲԱԶԻ—Կոլտոգնիկ—ակտիվիստ
3. ԹԱԹՈՍ—Զբաղման գյուղացի
4. ՄԱՐՈ Կոլտոգնիկ—Կոմսոմոլկա
5. ՍԱՐԳԻՍ—Միջակ գյուղացի
6. ՍԵՂՐԱԿ—Կոպերատիվի վարիչ
7. ԱՂԱԲԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ.—Կուլակ
8. ՍՈՆԱ.—Նրա յերիտասարդ կինը
9. ՍԱՂԱԹԵԼ ԱՌԱՔԵԼՈՎ.—Սպեկուլյանտ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Խորհում Ազարեկի խրհիքի անկյունը . ցատարանի վրա ցատած է Թաքոսը—առողջ յերիտասարդ, հագնված հնամաշ բլուզ, գլխին ջարդված կարտուզով գլխարկ : Նվագում է սրնգի վրա ու յերգում : Իրիկուն է :

*ԹԱԹՈՍ .—Մտքերս խառն են ու մոլթ ինչպես սև գիշեր,  
Ու սիրելի չե ինձ այս դատարկ աշխարհը :  
Միրոս Մարոյի սիրովն է վառված  
Երում, խանձում է, ինչպես խորոված :  
Միրում եմ նրան և նրա համար,  
Յես միշտ տանջվում եմ անքուն, անդադար :  
Արյունս յեռում է իմ յերակներում,  
Ինչպես դազանում դոլման բլղբլղում :  
Ո՛վ դու, իմ Մարո, միթե չես լսում,  
Քո Թաթոսը քեզ է աղաչում,  
Արի քաղցրացու կյանքը թշվառիս,  
Քանի դեռ շուտ է չեմ փչել հողիս :*

(Մտնում են Յեղիսան Բաջին, Սարգիսը և Մարոն : Մարոն ձեռքին ունի քղքի փաքքոց և մատիտ : Յեսան Բաջին նշաններով իբ մոտ է կանչում Մարոյին ու Սարգսին, խոսում է կամաց, նայելով խրհիքին : Թաքոսը շարունակում է մեղմ նվագել :)

*ՅԵՂՍԱՆ ԲԱՋԻ .—Գիտե՞ք, վոր... եղ թառլանը... Տեսել ե՞ք...  
(հանում է ծոցից բռնաթին և փաշում է)*

*Ըփչի... խկի ել կրտած չի :*

*ՍԱՐԳԻՍ .—(Բացասաբար գլուխը շարժելով) չի, կրտած չի :*

*ՄԱՐՈ .—Խաբեց եղ քաֆթաուր : Ամբողջ գյուղին խաբեց, վոր իբ խողը կրտած է : Ա՛յ քեզ կրտած :*

*ՅԵՂՍԱՆ ԲԱՋԻ .—Սարգիս, խկ է՞նչ ցեղիցն է :*

*ՍԱՐԳԻՍ .—Չազբանիչնի—ինչպիղի լավ տեսակի խող է :*

*ՅԵՂՍԱՆ .—Տեսնեմ ի՞նչ է անում նա այդ խողովներին :*

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ պիտի անի, քչում է բազար:

ՄԱՐՈ.—Տես, թե ի՞նչ մարդ է Աղարեղը ե՛ր:

ՄԱՐԳԻՍ.—Չծամած համը չես իմանա:

ՅԵՂՍԱՆ.—Դե, ընկերներ, ենպես պիտի անենք, վոր մթամ թե բանից խարար չենք, թե չե գլխի կնկնի. վոչ մի խոսք, թե չե եղ քաֆթաուը կկրտի նրան:

ՄԱՐՈ.—Դե թող կրտի: Շատ պետքներս է կուլակի մալը:

ՅԵՂՍԱՆ.—Ձե՛ր... կրտածը մենակ մտի տեղ կանցնի, իսկ յեթե կրտած չլինի՝ մենք նրան կուլտող կվերցնենք:

ՄԱՐԳԻՍ.—Մի տես, թե ինչ գալուց կսարքենք ե՛ր: Միայն թե ինչ պես վերցնենք: Փորձենք ելի. համա նրա դուրս կուտի նա:

ՅԵՂՍԱՆ.—Վաղը ետեղ բազմի գործարանից բրիգադեր է դալու. կարող է հենց ես գիշերը: Նա մեզ կողմի բոլոր նրա կուլակային տնտեսությունը լիկվեղացիայի յենթարկելու: Իսկ հիմա հարկավոր է զգուշ լինել, վոր նա վոչինչ չիմանա:

(Մտնում է Աղարեղը: Կարնահասակ, չարացած դեմքով, արծվափք և սպիտակ մագերով: Հագին կեղտոտ պիկեզակ, վորի առաջ տեղ-տեղ արյունոտ է:)

ԱՂԱԲԵԳ.—(հմեղով) Գուցե՞, քաղաքացի կոմիտի անդամները չայ անուշ անել կուզեյին:

ՅԵՂՍԱՆ.—Դրա վախտը չի, Աղարեղ աղա:

ՄԱՐԳԻՍ.—Հլա բոլորին չենք գրել:

ՄԱՐՈ.—Վորտե՞ղ են քո բաարակները

ԱՂԱԲԵԳ.—Իմ աշխատողները, բոլորն ել գակոնով են աշխատում: Վեց ուր գործ են անում, յոթերորդը հանգստանում: Պրոֆսոյուզի անգամ են, մինչև վերջին հոտաղը, և ինձանից ել շատ գոհ են, ինչպես իրենց հալալ հորից:

ՅԵՂՍԱՆ.—Դե գնանք մեկեկներին գրելու: Գնանք Աղարեղ, քո խողերի թագավորությունը:

ԱՂԱԲԵԳ.—Ես սհաթիս, Յեղոսն բաջի, ես սհաթիս աղունիկս գնացեք, յես ել ձեզ հետևից կհասնեմ: (Մարգիս, Յեղոսն Բաջին. և Մարոն գնում են:)

ԱՂԱԲԵԳ.—(չշուկով) Ոձե՛ր, սատանանե՛ր... Ամեն մի ծակ լուցկովում են: Լավ վոր գլխի չեն ընկել, վոր իմ խողը կըր-

տած չի (տեսնելով Թաթոսին ցնցվում է: Խոտում է քրեֆշորեն): Թաթոս ջան!

ԹԱԹՈՍ.—Ե՛ր Աղարեղ աղա, աշխարհի վերջն է:

ԱՂԱԲԵԳ.—Դուրս մի աուր... Ո՞ւմ մոտ տարար իմ 12 ազնվացեղ խողերը...

ԹԱԹՈՍ.—Մաթոսենց տունը. ինչպես հրամայել էյիր:

ԱՂԱԲԵԳ.—Ձեմ հրամայել, Թաթոս ջան, խնդրել եմ խնդրել: Դու իմ բարեկամս ես. ողնեցիր ինձ, անուշ ջան (ծիծաղում է) քեզ հետ մեկտեղ մատի փաթաթան ենք շինելու կուսակցականներին: Մինչև ինձ մոտ գրելու դան, Մաթոսը իմ խողերին կթագցնի, իսկ յերբ կամխան նրա մոտ դնա, յես նրա խողերը ինձ մոտ կպահեմ: Մենակ թե, դու Թաթոս ջան, արթուն կաց, հսկի. համ ինձ ու Մաթոսին ողուտ կտաս, համ ել մենք քո լավության տակից դուրս կգանք:

(Սոնան գլուխը պատուհանից դուրս է հանում:)

ԹԱԹՈՍ.—Քեզինից սղուտ, ինչպես քո աչքից լույս:

ԱՂԱԲԵԳ (Սոնային) ինչ ա՞, ինչ ես ցցվում, շուտ չբվիր և սամավարը գցիր: (Սոնան անհայտանում է:)

ՅԵՂՍԱՆ.—(բեմի հետևից) Ե՛ր, խողեյին, ետեղ յեկ:

ԱՂԱԲԵԳ.—(շփոթված, վագում է) Յեկա՞ յեկա՞: (գնում է)

(Սոնան նորից գայում է պատուհանից, անհայտանում է և վագելով մտնում է բեմը, մոտենալով Թաթոսին:)

ՍՈՆԱ.—Իմ աչքի լույս.—Չանիկս (գրկում է)

ԹԱԹՈՍ.—(ագաղվելով նրա գրկից վեր է կենում) Ձեռքդ, ձեռքդ, քեզ քաշիր: Մի բանի մասին, յերկու անգամ չեն խոսում: (բաց է բողնում նրան)

ՍՈՆԱ.—(մոտենում է մյուս կողմից) Թաթոս ջան! հողի ջան, քեզ համար ճոճոսն սապողներ կառնեմ... շաղիկ կկարեմ...

ԹԱԹՈՍ.—Վոչինչ, պետք չե, ձեռ քաշիր ինձանից... Մարդազալիս է...

ՍՈՆԱ.—Ո՛ր... (փեշերը հավաքելով փախչում է:)

ԹԱԹՈՍ.—(նրա հետևից) Սատանա՛... վոնց փախա՛վ... թո՛ւ... (նվագում է շվին և յերգում) Մտքերս խառն են և այլն.

(Արագ և գործունյա տեսքով մտնում է Մարոն, ցուցակը ձեռքին:)

**ԹԱԹՈՍ** — (կտրելով նրա նամապարհը) **Մարո, կաց!**

**ՄԱՐՈ** — Բաց-թող, ժամանակ չկա:

**ԹԱԹՈՍ** — Մարո, սպասիր, մի ճառ պիտի ասեմ:

**ՄԱՐՈ** — Գո՛վել ե՞ս ինչ ե (ծիծաղում է) ճառ ճառախոսին տե- սեք... Եղ ինչի կուլակի տան մոտերքին թրեվ ես գա- լիս. սեր ես փչրում ինչ ա՞... Ձե՛ ուզում ես ոգնել կտե- սիային:

**ԹԱԹՈՍ** — Դարդս ե կտրել... ինչ եմ յես: Ակտիվ եմ ինչ ե՞:

**ՄԱՐՈ** — Անամոթ, դու չքալոք ես թե չե՞:

**ԹԱԹՈՍ** — Յեղով:

**ՄԱՐՈ** — Յեվ չքալորները խմբում չե՞ս գրվում:

**ԹԱԹՈՍ** — Կաշխատելի խմբում, համա վախենում եմ, վոր սերս դեպի քեզ կորչի:

**ՄԱՐՈ** — (յերգում է) Միշտ հեռացիր, դու կուլակից վոչ թե շա- ուից, այլև խերից:

**ԹԱԹՈՍ** — Այս կյանքը, զղացր ե ինձ, համար, յեթե քո սերն ել լինի անթառամ:

**ՄԱՐՈ** — Թե ունենաս դեյրաթ, թասիր կոլխոզ կզրվես, չես մնա զյասիր:

**ԹԱԹՈՍ** — Ո՛ր, դու իմ սրտում վառել ես կրակ: Մի կտորատվիր, Մարո, մի անիր հանաք:

**ՄԱՐՈ** — Տեսնում եմ, վոր հաստագլուխ ես լսիր կարդամ կոլխոզի ցուցակը քեզ:

**ԹԱԹՈՍ** — Դեն դցիր, այդ ցուցակը կոլխոզի:

Յեվ գլխիցդ հանի միաքը խոզերի:

**ՄԱՐՈ** — (Յերգում է մի նոսայով)

Սարգիս, Միսակ, Կիրակոս, Չաքի

Շողիկ, բիբի Յեղսան բաջի ու Մուքի,

Մարո, Կարո, Սահակ, Մկո

Սիրուն, Մակար, Վարդան, Բենո,

Հարութ, Խեչո, Պետիկ, Սաքո:

**ԹԱԹՈՍ** — (Յերգում է այն ժամանակ յերբ Մարոն կարդում է ցուցակը:)

Թեվս անցած յարո սիրուն

Կերթանք ձորը դիմացի

Անուշ ժպտնաք մենք մեկ-մեկու

Սիրենք իրար ու խնդանք:

**ՄԱՐՈ** — Հաստագլուխ դու գյուղացի

Քեզ հետ գնացող չեմ, լավ իմացի:

(Թաքնուր շարունակում է նվագել. Մարոն անկատարի անհայտա- նում է: Նրա հետևից հայտնվում է Սոնան, փաթաթվում է հետևից Թաքնուի վզովը: Թաքնուը կարծելով, վոր դա Մարոն է, շարու- նակում է յերգել:

Թեվս անցած Մարոն սիրուն և այլն...

Նվագում է շվին: Մտնում է Աղաբեգը և կանգնում. ապա՛ծ նա- յում է նրանց: Սոնան վախենում է և ուզում է փախչել, բայց Թա- քնուը շվին դնում է գետին ձեռքերը հետ է տանում և կարծելով, վոր Մարոն է, գրկում է նրան և սկսում են պտտվել: Սոնան դիմա- գրում է:)

**ԱՂԱԲԵԳ** — Սպասիր, տո ուշքը գնաց ե՛:

**ՍՈՆԱ** — (հչալով) Թող, թող, մեջքս կտարեցիր... (Թաքնուը լսե- լով Սոնայի ձայնը, բաց է քողում ու կանգնում, բերանը լայն բաց արած:)

**ԱՂԱԲԵԳ** — Անամոթ քած, ուրիշ մարդկանց հետ թրեվ ես գալիս հա՞... Կորիր տուն (Սոնան փախչում է:)

**ԹԱԹՈՍ** — Ինչպես ել փաթաթվել եր, վզովս... բան չեմ հասկա- նում:

**ԱՂԱԲԵԳ** — (հեգնորեն) Ես յես չեմ և եդ խոզն ել իմը չի... ինչ է, ետեղ սեր ես փչրում ինչ ա՞...:

**ԹԱԹՈՍ** — Ետեղ, ախր Մարոն եր, թե սուտ ասեմ գետինը մըտ- նեմ... թո՛ւ...:

**ԱՂԱԲԵԳ** — (ծիծաղելով) իմ տեսածն ել նա եր: վոչինչ թաթոս ջան, վոչինչ: Յես բան չեմ տեսել և չեմ լսել: Կարծում ես Սոնան ինձ շատ պետք է, ծերուկիս... ա՛ն... վերց- բու... Քեզ համար յես ծառն արմատով կհանեմ, ուր մնաց թե կինս խնայեմ:

**ԹԱԹՈՍ** — Բա եղ ինչպես, Մարոն փոխվեց Սոնայի:

**ԱՂԱԲԵԳ** — Մարոյի հետ մի ման կա. նա ուրիշի հետ է ե լինում. ամբողջ գյուղը գիտի: Քեզ կզրզոի իմ դեմա (հնչում է) Թաթոս ջան! (կամաց) նրանց կոմիսսիան իմ մոտիցս ու- ղիղ Մաթոսի մոտ կերթա, շուշացնես հոգի ջան, վազիր իմ խոզերի հետևից... կճարեն նրանց ենտեղ և բոլորին ել կզրեն:

**ԹԱԹՈՍ** — Բա վոր չգնամ...:

ԱՂԱԲԵԳ.—(ծիծաղելով) Դե դնա, Թաթոս ջան, գնա՛ կոլխոզ:  
ԹԱԹՈՍ.—(ծիծաղելով) Մեկ է ձեր վերջն յեկեկ է, լիկվիդացեա  
կանեն... Բաղաքից բրիդադեր է գալու, վոր քեզ լավ լիկ-  
վիդացեա անի...

ԱՂԱԲԵԳ.—Ախ դու!... Ումից էս լսել եդ...

ԹԱԹՈՍ.—Քո Մաթոսն ասաց...

ԱՂԱԲԵԳ.—Ուրեմն դրա համար ե՞ս կոլխոզ մտնում (հանկարծ  
տոնք լսիստ փոխելով գոռում է) գնա՛, գնա՛, կոլխոզ, էս  
սհաթին գնա՛! բոլոր պարաքերդ կառնեմ. իշխանությանն  
էլ կասեմ; վոր խողերը քեզ մոտ էս պահում, ինձ կվնա-  
սեմ, քեզ էլ հետը, ... թող մեկտեղ լիկվիդացեա անեն  
մեզ

ԹԱԹՈՍ.—Յես էլ բոլոր խողերը քեզ հետ կտամ... Յես չեմ խընդ-  
բել, դու յես կապել վզիս իմ պարաքերի դիմաց:

ԱՂԱԲԵԳ.—Սրան տեսեք: Ահա թե ինչ, եդպես, դու լավություն  
արա, իսկ սա վատություն... Քեզ համար եմ անում, էլ  
ու՛մ համար ե՞... Քեզ ողուտ չկա ինչ ե՞... Սրան տես...  
կուրակի ալիցուկն էս թագցրել...

ԹԱԹՈՍ.—(յերգում է) Ել հերիք ե՛! միշտ եսպես.

Ձես վախեցնի ինձ մեկ էլ.

Կհամարեմ ամեն բան

Կգնամ կոլխոզը մեր գյուղի:

ԱՂԱԲԵԳ.—(յերգում է) Սուղարուձական կոլխոզ

Տունդ չի ցնի բոլ խող.

Գործը չի արաքի, Թաթո՛ս...

Ով կոլխոզն է մտնում խողի

Կոլխոզն նրան կխուզի:

ԹԱԹՈՍ.—Կխուզի՞...

ԱՂԱԲԵԳ.—Ձեռքիցդ կխլեն վերջին փալատ

Ու միշտ կմնաս վրդդ ծոած...

ԹԱԹՈՍ.—Վիզս ծոած...

ԱՂԱԲԵԳ.—Տուր ասորանքդ կամավոր,

Շարվար ուզե՞ս... Տալոնով...

ԹԱԹՈՍ.—Տալոնով...

ԱՂԱԲԵԳ.—Ողուտը կտան պետության

Իսկ Ձեզ կմնա ոստայիսկան...

ԹԱԹՈՍ.—Ռոստայիսկան...

ԱՂԱԲԵԳ.—Շատ կթափեք այուն քրտինք  
Ելի աղքատ, քյասիք մարդիկ...

ԹԱԹՈՍ.—(գլխարկը հանելով) Յտեսություն (գնում է)

ԱՂԱԲԵԳ.—Կաց! եդ ո՞ւր...

ԹԱԹՈՍ.—Կանդնեցի...

ԱՂԱԲԵԳ.—Լսիր...

ԹԱԹՈՍ.—Լսում եմ:

ԱՂԱԲԵԳ.—Են էլ ասեմ, սիրելիս, վոր ասանց իմ թառլանի, նը-  
բանց կոլխոզից բան չի դուրս գա: Իսկ իմ թառլանը սաղ-  
սաղ յես նրանց չեմ տա:

ԹԱԹՈՍ.—Կմորթե՞ս...

ԱՂԱԲԵԳ.—(խաչակնիքելով) Աստված չանի Թաթոս... Ձե իրի-  
կունը կասեմ... Թու, Թու, Թու... Ավելի լավ է՝ դնա իմ  
խողերի հետևից...

ԹԱԹՈՍ.—(հոգոց հանելով) Ե՛ի,

ԱՂԱԲԵԳ.—Հետս կգաս տունը:—Յես գնամ կնոջս ասեմ, վոր մի  
բան սարքի բողազներս թրջենք... կգնա՞ս... (լուսքյուն)

ԹԱԹՈՍ.—(հոգոց հանելով) կգնամ:

ԱՂԱԲԵԳ.—(ծիծաղելով) Դե մենք քեզ հետ յուր կղնանք Թաթոս,  
չմոռանաս մանեկ մեր տունը (գնում է):

ԹԱԹՈՍ.—(մեմակ- վերցնում է շվիս և մեղմ նվագում)

Ախ դիտեք ինչքան դեղեցիկ է նա,

Իմ Մարոն—ինչքան սատանա,

Աշխարհում չկա նրա նմանը

Նա յե իմ կյանքի դեղն ու դարմանը,

(Մտնում է Յեղսան քաջին)

ՅԵՂՍԱՆ.—Յեվ ահա պատրաստ է (Թաթոսին) Ե՛յ, դու կոլխոզից  
դուրս մնացած չորան, նստիր և թթվիր... Մի տես թե  
ինչ է կատարվում... Դու էլ կասես թե տղամարդ եմ  
կանայքն հասարակական դործ են ասնում, իսկ դո՞ւ...

ԹԱԹՈՍ.—Քո դործը չի:

ՅԵՂՍԱՆ.—Մարոյին սիրում ե՞ս... կարծում էս Մարոն քեզ հետ  
կգա, քո անհատական անտեսությունը... Առ (Թաթոսի  
քիս դեմ է անում մատների կամքինացիա: Ծոցից հանում  
է բուռքի և քաշում փաշտացնելով) Քսան տարեկան տղա  
յես. կուրակի հետ յես թրև դալիս... Հիմա ծեբերն են...

**ԹԱԹՈՍ** — Բոլա ճղճղաս... Արարապ ջաշիր, հանդիստ թող ինձ...  
**ՅԵՂՍԱՆ** — Հանդիստ թո՛ղ... Ինչո՞ւ ժողովի չեկար:  
**ԹԱԹՈՍ** — Դա իմ գործն է... Յես եմ իմ զլխիս տերը... վորտեղ ուղեմ ենտեղ ել կթուչեմ...  
**ՅԵՂՍԱՆ** — Վորոչեցինք խողերը համայնացնել: Փող հավաքեցինք կոլխողի նոր խողանոցի համար (խփում է Թաթոսի ուսին) մտիր կոլխող Թաթոս: Յերկար մտածելու կարիք չկա...  
**ԹԱԹՈՍ** — Լալ... Առանց քեզ ել խելքս կտրում է. դու ինչ է՞ս դարդ անում, չլինի թե նախադա՛հ է՞ս:  
**ՅԵՂՍԱՆ** — (կուրծքը ծեծելով) Գյուղխորհրդի ակտիվ եմ, անասունների գործի լիազորը, կոլխողնիկ... բա դո՞ք... հլա հազիդ շարվար կա... Բեզ այդպես տեսողի սիրտը կըխառնի:  
**ԹԱԹՈՍ** — Գնա, գնա, ողը մի կեղտոտի. միևնույն է չես համոզի, վոր կոլխող մտնեմ... վերջին ունեցածներդ տարել եք, վոր...  
**ՅԵՂՍԱՆ** — (Բափախարում է Թաթոսի ուսերը և ծիծաղում) Ո՞ւմ խոսքերն ես կրկնում, պոսկա, կուլակը խելքիդ փչել է: Շուտով հերթը խնամակալին կհասնի... Նրա վղկոթին ել կտանք...  
**ԹԱԹՈՍ** — Թքել եմ յես բոլորի վրա ել: Նա իմ խնամիս է ի՞նչ է...  
**ՅԵՂՍԱՆ** — Ճիշտ եմ ասում. վոչ վոքի դու պետք չես, յերբ հասարակությունից փախչում ես... (բղավում է) Է՛յ, Մարո, Սարգիս գնանք դյուղամեջը. (մտնում են Մարոն, Սարգիս և հետո Աղաբեգը):  
**ՄԱՐՈ** — Բա՞ Մաթոսի տունը...  
**ՍԱՐԳԻՍ** — Ուշ է: Վաղը կգնանք. ժամանակ հլա շատ կա:  
**ՍՂԱԲԵԳ** — Թանկադին հյուրեր, գնանք մեր տուն չայ խմելու:  
**ՅԵՂՍԱՆ** — Եդ վոր որվանից մենք քեզ հյուրեր դառանք: Գնանք ընկերներ, դյուղամեջը: (գնում են):  
**ՍԱՐԳԻՍ** — Յես մի ստական կիմեմ, բողազս չորացել է:  
**ԹԱԹՈՍ** — Սպասիր Մարո:  
**ՍՂԱԲԵԳ** — (վերցնելով Սարգսի քեվը) Գնանք Սարգիս, գնանք, դու խո բատրակ չես, վո՞ր ինձ դեմ գնաս...  
**ՍԱՐԳԻՍ** — Բողազս չորացել է, շատ եմ ծարավ: (Գնում են)

**ԹԱԹՈՍ** — Մարո: Ճիշտ եմ ասում, գնանք Չազս, հենց ես սհաթիս գնանք:  
**ՄԱՐՈ** — (հրելով նրան) Չահլա տարար, Չազս: Շատ պետք ես դու ինձ (վազելով և ծիծաղելով գնում է):  
**ԹԱԹՈՍ** — (Շղմած կանգնում. հետո վերցնում է շվին, անում է և յերգում)  
 Պատճառն ի՞նչ է չեմ հասկանում,  
 Մարոն թողեց ու գնաց...  
 Ու տխրությունն ինձ պատեց:  
 Ձլեմ չվիս ու դարդերս քամուն տամ,  
 Պառավ Սաթոյի մոտ կոնծելու գնամ.  
 Խմեմ փրկարար յես կարմիր գինին  
 Դարդս քամուն տամ ու չվիս զլեմ:

(Վարազույր)

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ.

Աղաբեկի տունը-դեպի աջ բեմի խորքում-դուռ Չախում դուռ, հետեվի պատում պատուհան: Սեղանի վրա սամավար, ուտելի-դեմներ և խմելիք: Սոնան նստած է պատուհանի մոտ: Աղաբեկը դուռն մոտ ուղեկցում է գնացող Սարգսին:

ՍԱՐԳՍԻՍ.—(գլխարկը հագնելով) Շնորհակալ եմ տան տերից... Յես զնացի:

ԱՂԱՔԵԳ.—Աստված քեզ հետ... Գնա Սարգիս, սիրելիս, ինչպես տեսնում եմ թունդ էս կպել եզ կոլխոզից... Համա խոզերին, բոլորին ել մորթիր... Յես քո լավն եմ ուզում... Հալատա ինձ, վոր անասուն կոլխոզ տանելով, դյուղացուն, վոր մի ոզուտ չկա... Մի վռազի սիրելիս... վռագելուց բան չի դուրս դա... Դու լավ միջակ յես: Քո տըն-տեսությունը, կոլխոզից ավելի ոզուտ կտա... Մորթելը միակ ճանապարհն է... Մորթիր մինչև վերջինը...

ՍԱՐԳՍԻՍ.—Մենք պետք է առաջ զնանք. համա քո ասելով պետք է սրանից ել հետ զնանք... երեվում է, վոր մի ճանապարհ կա... Լավ կմտածեմ...:

ԱՂԱՔԵԳ.—Եզ ճառախոսներին մի լսիր... Ուրիշի խելքով մի ասըրի... Սուտ են ասում նրանք: Մեր դյուղացին մի ճանապարհ ունի—Մորթել անասուններին և պրծա՛վ...:

ՍԱՐԳՍԻՍ.—Մեկին փրկություն է, մյուսին չարչարանք... դե մնաք բարի... Սոնա մնաս բարով:

ԱՂԱՔԵԳ.—(փակում է նրա հետևից դուռը և սկսում է արագ շրջել սենյակում: Կանգնում է նայում կնոջը, գլուխը բացասաբար շարժելով:)

ԱՂԱՔԵԳ.—(յերգում է) Ակոչկիցը ամեն որ Դուրս ես նայում ջահելի Ախ, դու սպասի! (բռնեցքը նսնում է)

ՍՈՆԱ.—Վա՛յ, վա՛յ...

ԱՂԱՔԵԳ.—Տունդ, տեղդ թափթփված Սեր փչրելում, պատրաստ կաց Ախ դու!

ՍՈՆԱ.—(նչալով) Ո՛յ, ո՛յ,

ԱՂԱՔԵԳ.—Կանայք դատան ավարա, Թե դոչախ էս ճար արա: Սատանա!

ՍՈՆԱ.—Ո՛յ, ո՛յ.

ԱՂԱՔԵԳ.—Ֆիկլիդ-միկլիդ, դու բաց թող Կաշխ կմաշկեմ ինչպես խող:

ՍՈՆԱ.—Մ՛յ, ա՛յ.

(Աղաբեկը ուզում է նրան թակել, բայց Սոնան բռնում է նրա ձեռք:)

ՍՈՆԱ.—(յերգում է) Աղաբեգ ջան! սպասիր, Կլինեմ յես քեզ լավ կին, Տեր տիրական իմ ջանիկ Աղաբեգ ջան իմ անուշիկ: Ակոչկից չեմ նայի ցած Կսպասեմ քեզ տանը նստած Աղաբեգ ջան, իմ անուշիկ Տեր—տիրական իմ ջանիկ:

ԱՂԱՔԵԳ.—(Չեռնեք սեղանին խփելով գոռում է) Հերիք է:(Պաուզա հանգիստ տոնով): Իհարկե, թող բոլորին հայտնի լինի, բոլորին, վոր Աղաբեգ Հարությունովը ել կուլակ չի: Որինակելի խողարուժարանի տեր չի:

ՍՈՆԱ.—(վախեցած) Ինչպես... Աղաբեգ, եզ ինչ էս ասում:

ԱՂԱՔԵԳ.—(Զարմացած) Ի հարկե: Լիկվիդացիա եմ անելու մինչև վերջին խողիս պոչը:

ՍՈՆԱ.—(վախեցած) Վայ՛...

ԱՂԱՔԵԳ.—(Գոռում է) Աղաբեգ Հարությունովը ինքն իրան լիկ-վիդացիա յե անում—և ուղիղ դեպի կոլխոզ, սոցխալիզմ կառուցելու... կուրակներին վոչնչացնելու:

ՍՈՆԱ.—Խելքդ թոցրել ես Աղաբեգ: Հարկավոր է մեռն չաղ տալ քեզ վրա... (մի քիչ արագ է անում ափի մեջ և շաղ է տալիս Աղաբեգի վրա: Յերգում է)

ՍՈՆԱ.—Լավ մտածիր Աղաբեգ ջան

Մեզ կհասցնես  
Աղքատութիւն:

ԱՂԱԲԵԿ.—Կծախեմ խողերս  
Տունս, տեղս,  
Փողերը ջերս  
Արտելը տեղս:

ՍՈՆԱ.—Կորչելու յես  
Խողերիդ հետ  
Գու խորամանկ  
Ու խարերա:

ԱՂԱԲԵԳ.—Այս քեզ տանի  
Սև սատանան  
Ինձ հետ կլինի  
Թարլան խոզս:

ՍՈՆԱ.—Քեզ չեն ընդունի  
Խողի կոխող  
Վզիդ կտան  
Կհանեն թող:

ԱՂԱԲԵԳ.—Կփախչենք մենք  
Չեն դանի մեզ,  
Կպարենք ենտեղ  
Քեզ հետ մեկտեղ: (խոսելով)

Եղպես Սոնա ջան! Ամեն ինչ փող կը շինեմ, խողերս կմորթեմ և բազար կհանեմ (նայելով չորս կողմը, մտնելու է կնոջը և կամացուկ ասում) փոչ թե, մենակ իմը... Յես արդեն գյուղում լուր եմ տարածել, վոր միջակներն և աղքատներն ել մորթեն... մեկ է, անասուններին, բոլորին ել կոխող են տանելու... նրանցից ել կանոնեմ եման և բազար կհանեմ:

ՍՈՆԱ.—Ենթախտ քեզ բանդ կնստացնեն, Աղաբեգ ջան!

ԱՂԱԲԵԳ.—Ե՛, այ կնիկ. չեն կարա: Յես մի կողմը կբաշխեմ: Քաղաքից սպեկուլյանտ Սաղաթելը կգա և բոլորը ինքը կանի... նրա հետ մաքուր կես կանենք... Ետոր, եղուց նա կլինի ետեղ... իսկ դու փոխանակ ահոջից մտիկ անելու, տնետուն դնա և համոզի գյուղացիներին, վոր իբր թե կըռիվ է լինելու և բոլոր խողերին, վերցնելու յեն բանակի համար... շատ կմորթեն... ջիրս շատ փող կ'լինի... խողերը

կծախենք, տնտեսութիւնը լիկվիտացիա կանենք, թաւրան խողին կվերցնենք և քեզ հետ կ'դնանք մի նոր տեղ բախտ փորձելու:

(Մտնում է հարքած թաքուք)

ԹԱԹՈՍ.—Խողերը բերի... հողիս դուրս յեկավ... ամբողջ ճանապարհին վաղվղել եմ...

ԱՂԱԲԵԳ.—(Ուրախ) Բերի՞ր, Թաթոս ջան փող էն իմ խողերս... ինչպես է Մաթոսը:

ԹԱԹՈՍ.—Հլա բերանում չունչ կա. նամակ տվեց, վոր քեզ տամ սրանցից է բերել. (տալիս է նախակը):

ԱՂԱԲԵԳ.—Աստված քեզ ոգնի Թաթոս, ինչպես դու մեզ ողնցիր: Խողերին տար տեղավորի ու յեկ մի—մի ստական գցենք:

ԹԱԹՈՍ.—Լա՛վ... (գնում է որորվելով)

ԱՂԱԲԵԳ.—(Բացում է նամակը) Ա՛ ա՛, Սաղաթել Առաքելովից է (կարդում է) «Հարգելի Աղաբեգ ջան! Թե մեզանից հարցնես, փառք ասածու լավ ենք, միայն ձեզանից ենք նիդարան: Հայտնում եմ ձեզ շատ վատ նորութիւն: Յես իմացել եմ, իմ մարդկանցից, վոր քաղաքից ձեր գյուղն է գալու գարնանացանի կամպանյան անցկացնելու բանկոր—բրիգադիր, վորին կոտպերատիվը ուղարկում է, վոր կանտրակտացիա անի, բոլոր աղքատ և միջակ գյուղացիներին անասունները ձեր շրջանում և կոխող կազմակերպի... Ամսի 21-ի լույս 22-ի, դիշերը նա այդտեղ կլինի» (խոսում է) և հէ՛, ուրեմն այս դիշերը... «վախենում եմ, վոր մեր պլանը գլուխ չգա... Յես գալու յեմ սկորի պոեզդով և կըլինեմ նույնպես 21-ի լույս 22-ի դիշերը:

Իմիջի այլոց Աղաբեգ ջան! քեզ համար մի լավ խոզ եմ ճարել Ամերիկական ցեղի, կխոսեմ և մյուս գալուս կբերեմ: Սաղաթել Առաքելովը»: (վերջացնում է կարդալ. պաւզա): Բրիգադնիկ... կանտրակտացիա բոլոր անասուններին... Ուրեմն Թաթոսը ձեռք եր ասում... (գոռում է) ինչ՞ է սա... Շուն շան վորդիք... ես բոլորին յերբ՞ վերջ կլինի... Չե, վոր յես ինքս եմ ինձ լիկվիտացիա անում... Կենտրոնի դեբեկտիվն եմ կատարում... Յե՛վ վերջն ել չեն թողնում, վոր... (կատաղելով) Սպասեցե՛ք!, սպասեցե՛ք! հետո կճանանչեք դուք ինձ... կհիշեք ինձ. արջունախում անասվածներ... (գոռում է) Ա՛նա՛...

Գյուղի ցեցեր—2.

6/189-67



ՍՈՆԱ.—Ինչ է՞...

ՅՂԱՅԵԳ.—Ելի՞ր պատուհանից... Մարչ Թաթնոսին կանչի: Ասա, վոր ես սհաթին դա (Սոնան գնում է: Աղաբեզը վրդովված շրջում է սեմյակում) լավ իմացեք թե ինչ է նշանակում Աղաբեզի ճամբան կտրել (գոռալով) վոչնչացնեմ, առամնեբրովս կկրծոտեմ... վոր մի խանդարիչի սող չեմ թողնի... (Մտնում են Սոնան և Թաթնոսը)

ՍՈՆԱ.—Ահա նա...

ԹԱԹՈՍ.—Ինչու՞ յես կանչել

ՅՂԱՅԵԳ.—(Կտրուկ) դու զնա ետեղից... (Սոնան գնում է: Աղաբեզը խոսում է Թաթնոսի հետ, վրդովմունքից դողում է բայց աշխատում է լինել հանգիստ:) Եհ!, Թաթնոս ջան, խողերը տեղավորեցի՞ր:

ԱՂԱՅԵԳ.—(Վտոնեբի ծայրերի վրա, կուգե—կուգ, խորամակն ժպտալով, մտեկում է Թաթնոսին բռնում է նրա ձեռները և շոյում ու յերգում:)

Խողիս նման սիրուն ես, դու Թաթնոս՝ս ձենդ նրան ձենի նման անուշ է, Թաթնոս. (Մոտեցնում է նրան սեղանին)

Արադ ու գինին ինչպես հոսող գետ

Քեֆ արա Թաթնոս, Աղաբեզի հետ

(Ուտում են և խմում)

Կվարձադրեմ ջեղ փողերով առատ

Ես ջեղ հինգնոց, ես չերվոնեց, ես յերկու (տալիս է փողերը Թաթնոսին, նա վերցնում և պահում:)

Բոլոր խողերին, վոր պահում ես ջեղ մոտ

Շատ սիրելուց տալիս եմ ջեղ փեշբաշ:

(Թաթնոսը ուրախությամբ ուզում է փախչել Աղաբեզը նրան բռնում է:)

Քեզ համար ամեն ինչ կանեմ

Առ հարյուրանոց քո ցավը տանեմ: (տալիս է նրան 100 ր. Թաթնոսը ուզում վերցնել:)

Չէ՛, մի սպասիր, ձեռք մի տուր սրան, (կամաց) հլա սկզբից, նրան սպանիր...

Թաթնոս.—(Սարսափած) Դա՞ ով է... ինչ դու սատանա, վերցրու բարիքդ հեա—նա: (հանում է փողերը տալիս է կուլակին—նա չի վերցնում:)

Ուզում ես փողով ինձ խարեո՞

Սեպտավես ու մեղքի տակ զցես...

ՅՂԱՅԵԳ.—Ամեն ինչ սարքել եմ ենպես... կփախչենք մենք, էս—կուլն ջեղ հեա: (խմացնում է նրան.)

Հոժածաձայնվիր, դուր ժամանակ մի կորցնի կյանքը կղառնա ինչպես դրախտ Աղամի:

ԹԱԹՈՍ.—Հողիս չեմ ծախի յես սաթալեղին ու ավելորդ խոսքերիցդ ինձ ազատիր...

ՅՂԱՅԵԳ.—Ինչու՞

ԹԱԹՈՍ.—Հենց ենպես... վոր չեմ ուզում այդ մեղքը վերցնեմ ինձ վրա:

ՅՂԱՅԵԳ.—Դե լավ լսիր, դու դավաճան սևերես, կջարդեմ ջեղ ինչ պես շանը անյերես. (Թաթնոսի քթին դեմ է անում բռունցքը հետո գրպանից հանում է Սաղաթեղի նամակը և ցույց է տալիս Թաթնոսին:)

Գրում է խնամիս հարևան գյուղից, պատահել է դործ, մեր գործի նման, կուլլախի ապրանքը պահել է բեղնյակ ջեղ նրման: Գործը բացվել, բռնել են յերկուսին պատի տակին կանգնեցրել են միասին, լիկվիդացիա «զվող պլե» միասին: Մեզ մնում է մի ճանապարհ, Թաթնոս սպանել, են մարգուն ու փախչել դրախտ...

ԹԱԹՈՍ.—(Բարկացած նայելով նրան:) Ասա! ու՞մ... կկատարեմ:

ՅՂԱՅԵԳ.—Մերոնցից չե, բրիգադիր է դավադի ջեղ և ինձ լիկվիդացիա պիտ անի:

ԹԱԹՈՍ.—Դատարկ գլխով կորելը

Միկենույն է ամեն անգ,

Առանց Մարո ապրելը

Միկենույն է թե վորտեղ:

(Աղաբեզ և Թաթնոս իրար ձեռք են սեղմում)

ԴԻԱՍԻՆ.—Գնանք ես տեղից մենք դեպի դրախտ ջեֆ արա, Թաթնոս Աղաբեզի հետ:

(Վարագույր)

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Գիշեր ե : Լուսնյակ . բեմի վրա վերստի սյունը . շվացնելով մտնում ե Սաղաթեյը—պնդակազմ միջահասակ տղամարդ : Հագել ե խունացած պալտո, վարի վարատնիկը բարձրացրել ե, տակից յերեվում ե սպիտակ շապիկը . գլխին կեպկա, քաշած աչքերին, հագիւ սապոկներ տեղ—տեղ ցեխոտված : Չեռքին չեմոդան . մտնում ե բեմը պարելով :

ՍԱՂԱԹԵԼ .—(Յերգում ե)

Ձեզնից ով չի ճանանչում  
Այս ֆիզուրային .  
Նեպման Լեվոնին  
Բուրժույ Ժորժիկին,  
Նախկին Նիկոլի  
Կապիտալիստի տղին—  
Ձրկված եմ յես իրավունքից  
Ընտրել ընտրվելու ձայնից .  
Բայց դո՛հ եմ ես ամենքից :  
Իմ պրինցիպն ե խաբելը,  
Ու ջերերս լցնելը . . .  
Ձեր առաջն ե սալիդնի,  
Սաղաթեյ առաքելով . . .  
(խոնարհվում ե ,)  
Տեսակետս նախկինն ե  
Պարեն ու թալանենն ե,  
Քյասիբի տուն քանդելը  
Հարստություն դիզելը :  
Ինչ վոր տեսնես տեղը չի  
Խփշտկի ու տեղավորի . . .  
Կուլակի հետ թե՛վ թե՛վի  
Կհալաքենք մասցու :

Միջակի խելքին լցնում

Քյասիբի թողը հանում :

Ու մեր գրպանը լցնում . . .

(Ծիծաղելի կերպով, քազնված տեղից դուրս ե գալիս Թաթոսը : Մինչև ասամենքը զինված գոտիում կացին և դանակ, ձեռքին յեղան ու մանգաղ : Սաղաթեյը չնկատելով նրան շարունակում ե յերգել և պարել :)

ՍԱՂԱԹԵԼ .—Մեր գյուղացին հիմար ե

Խողուկներին մորթում ե

Ու չէրտի, վոր կոլխոզ

Նրան կտա բոլ—խոզ :

ԹԱԹՈՍ .—(լսում ե և յերգում)

Խոտում ե կոլխոզի մասին . . .

ՍԱՂԱԹԵԼ .—(յերգում ե) Դե թող ապրի կեղտի մեջ . . .

ԹԱԹՈՍ .—Ձեռքին ել չեմոտան ե

ՍԱՂԱԹԵԼ .—Լցնեմ գրպաններս . . .

ԹԱԹՈՍ .—Ծակծկեմ . . . բայց ինչով . . .

Ձեռքերովս սեփակա՞ն . . .

Յեղանո՞վ . . . (բռնում ե յեղանը)

Ձե դանակով . . . (հանում ե դանակը)

Թե կացնով . . .

ՍԱՂԱԹԵԼ .—(չնկատելով)

Հիմար ե գյուղացին ինչպես յերեխա,

Հնձիր դու կուլակ, չաղ—չաղ մասցու :

ԹԱԹՈՍ .—Թե՞ դորձածեմ մանդաղը . . .

ՍԱՂԱԹԵԼ .—Լցրու գրպաններդ . . .

ԹԱԹՈՍ .—(Մանգաղը ցած դնելով)

Ձե եղ մեղքը չեմ վերցնի . . .

(թեվերը վեր ե քաշում)

Յումբուղովս հյուրատիրեմ

Ու ուշաթափ վեր դցեմ . . .

Այս մարդը պրոլետար ե

Այլ վոչ պարոն պրիկազչիկ . . .

(Գաղտագողի մոտենում ե Սաղաթեյին . Սաղաթեյը նրան չնկատելով պարում ե) :

ՍԱՂԱԹԵԼ.—Իմ պրինցիպս նախկինն է

Գրպաններս լցնելն է...

ԹԱԹՈՍ.—(հետեւից խփում է վզակոթին) Ես քեզ մեկ-յերկրորդն  
եւ բարուչկատ կտա... (Սաղաթելը ուշագեաց վեր է ընկ-  
նում: Թաթոսը վերցնում է նրան և բեմից տանում...  
վերադառնում է և վերցնում Մանգաղը:)

ԹԱԹՈՍ.—Յեւ վաղերն են դո՛ւ և դառները... պարտքս կատարե-  
ցի... վղիս չպցեցի (գնում է: Նրա դիմացն է դուրս գա-  
լիս Աղաթեգը. կուշ յեկած ու առամները կրնտացնելով:

ՍԱՂԱԹԵԳ.—Վերջացրի՞ր...

ԹԱԹՈՍ.—Լա՛վ...

ՍԱՂԱԹԵԳ.—(դողդոջուն ձեռքերով բռնում է Թաթոսի ուսերը:)  
Թաթոս... հոգի ջան!

ԹԱԹՈՍ.—(Մանգաղը ցույց տալով:) Ահա, սրտնով վոր չխփեցի  
• դլխին, լեզուն բերնում չորացավ: Նստեց գետինը և ինձ  
հարցնում է «դո՞ւ ինձ սպանեցիր»: Ասում եմ—սպանեցի  
քաղաքացի—եւ դու վեր չես կենալու—չըլի-յեղանով կող-  
քին տվի... նա եւ վեր ընկավ ու մեռավ:

ՍԱՂԱԹԵԳ.—Թաթոս ջան, բա՞ վորտեղ տարար նրան...

ԹԱԹՈՍ.—Ձեռներովս փոս փորեցի և մեջը թաղեցի... եւ չի դուրս  
դա:

ՍԱՂԱԹԵԳ.—(դողալով) Թաթոս! անուշ ջան...

ԹԱԹՈՍ.—(զզվանքով հրում է նրան) Սասանա— (գնում է:)

ՍԱՂԱԹԵԳ.—(դողում է ներքին հուզմունքից)

(Սկսում է պարել և յերգել)

Գյուղացու խելքը պակաս է

Ու խուզելու լավ վախտ է,

Բրիգադերը քաղաքի

Են աշխարհը ճամբեցի:

Առանց Բրիգադեր կոլխոզ

Ձի հավաքի հենց մի խոզ:

(վագեվորվելով)

Ձի հասկանում գյուղացին

Խերն ու շառը իր գործի

Խոզուկներին կմորթոտի

Աղաթեզն էլ կճանկի

Տունն ինվենտար կծախի

Փող կշինի ու կճղի...

Հետը կվերցնի թառանին

Աղնվացեղ խողին:

Գյուղխորհուրդ ու վոմսոմոլ

Մատի փութթան կշինի

Հա, հա, հա, հա.

Գյուղացու խելք դարտարկ է

Խուզելու ժամանակ է... (պարում է)

(Մտնում է վարդանովը, ձեռքին չեմոզան. հագին կաշվի պիե-  
ջակ: Սրբում է ֆակատի ֆրոխիքը:)

ՎԱՐԴԱՆՈՎ.— Այ թե քրտնել եմ... Գետը է ուղիղ գյուղխորհուրդ  
դնալ: Առաջնորդ կհավաքեմ գյուղացիներին... Հարվածա-  
յին կարդով... (տեսնելով պարող Աղաթեկին) Մենակ ճա-  
նապարհի վրա պարում է... Մեկտանա է յերեվի... կամ  
դիժ. (դիմելով Աղաթեգին:) պտտվիր պապաշա! Հարվա-  
ծային կարդով պտտվիր... (մթնում է.)

ՍԱՂԱԹԵԳ.— (Թեվերը լայն բաց արած, նետվում է դեպի վարդա-  
նովը). Սաղաթեւ, հոգի ջան... Յեկա՞ր. իսկ մենք հենց  
ես սհաթիս, ես տեղում քաղաքի գործարանի բրիգադե-  
րին թաղեցինք... Նա ալլես չկա... Եւ մեզ չի խանգարի...  
Դե դնա՛նք, դնանք ինձ մոտ, կնիկս սպասում է, սամա-  
վարը յեի է յեկել: կհյուրասիրեմ քեզ նորություններով:

ՎԱՐԴԱՆՈՎ.— (կողմ) Մա ինձ, ինչ վոր մեկի տեղ է ընդունում...  
վարդանով! արթուն կաց...

ՍԱՂԱԹԵԳ.— (յերգում է) Մի ամսական խողուկիս

Մորթեցի ես առավոտ...

ՎԱՐԴԱՆՈՎ.— Կա՛ց, կա՛ց...

ՍԱՂԱԹԵԳ.— (յերգում է) Գինին կլինի գետի պես

Կարող ես խմիր ինձ հետ...

ՎԱՐԴԱՆՈՎ.— Սպասիր...

ՍԱՂԱԹԵԳ.— Խիյարով ու քյալամով

Կուտես դու մեծ իշտահով,

Խմենք դինին ալ հացով

Թաղենք բրիգադերին քացով:

Ախպերություն իմ և քո

Հաստատ լինի աստուծով...

Յես քամակից դանակով

Դու առաջից հանաքով:

Յես մորթել տամ դու ծախի

Թող Սովետը տրաքվի...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Եղպես մեկից պատաշա!

Ում տեղն ես ինձ ընդունում:

ԱՂԱՖԵԳ.—(վախեցած) Ինչպե՞ս... կաց մի տեսնեմ...

Եդ ով ե՞ս դու...

ՎԱՐԴԱՆՈՎ.—(Ժպտալով) Բա դո՞ւ...

ԱՂԱՖԵԳ.—(շշկվելով) Յե՞ս... Յես չեմ...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Վորտեղ կեղտ կա ենտեղ խող:

Այդ լավ դիտե ամեն վոք:

ԱՂԱՖԵԳ.—(հաաբախկուրքյանը) Ա՛յ քեզ հանելուկ: (վարդանու-  
վին) Ով ե՞ս դու...

ՎԱՐԴԱՆՈՎ.—(Ժպտալով) Հենց «նա»... Եդ ում համար ես պատ-  
րաստել եզ զակուակին...

ԱՂԱՖԵԳ.—(նստում է) Բան չեմ հասկանում, խելք՞ չի կարում...

Ա՛յ... (փախչում է) Ազատեցեք...

ՎԱՐԴԱՆՈՎ.—(բռնելով նրան) Պապաչա! դու—ցնդվել ե՞ս... Եդ  
ո՞ւմն ես սպասում...

ԱՂԱՖԵԳ.—Սաղաթելին:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Պառկած է նա հիվանդ:

Դողացնում է անընդհատ:

Գիշեր ցերեկ դողում է,

Աչնան տերեվի նման:

Յես ընկերն եմ Սաղաթելի

Ու պրիկաչչիկ հին որերի...

Հին բերեկամը հա, հա, հա:

Ինչ խիտում ենք կիսում ենք:

Սրար աշխարհ, խափում ենք:

Առանց ինձ, նա վոչ մի շաղ

Չի արել ու չի անի:

Կես ենք անում աշխատանք

Ինչպես հալալ ախպոր պես...

բա՞ս.....

ԱՂԱՖԵԳ.—Ուրեմն... դու... նրա գործակիցն ե՞ս...

ՎԱՐԴԱՆՈՎ.—(լուրջ) Հասկացիր առանց ավելորդ խոսքերի...

ԱՂԱՖԵԳ.—Ջա՛ն, Սաղաթել հոգի ջան՛,

Խելքիդ մատաղ ջանե ջան՛,

Գնանք դեպ տուն վորդի ջան՛,

Հրես մոտ է... յերկու շաղ:

ՎԱՐԴԱՆՈՎ.—(կողմ) Ինքն իր վտտով ու ձեռքով

Ընկավ զակարդս մի կուլակ:

ԱՂԱՖԵԳ.—(պարելով պտտում է բեմի շուրջ և յերգում)

Գյուղացու խելք պակաս է

Ու խուղելու լավ վախտ է:

Գործդ լավ տես Աղարեդ

Մորթիք խողերին մեկ-մեկ:

Բեղնյակ սրեղնյակ ես տեղս

Կոմսոմոլը ես ջերս...

(վարագույլ)

### ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԳ

Յերկրորդ պատկերի տեսարանը: Սեղանի մոտ նստած են Աղա-  
բեգը և վարդանովը: Սոնան ծուլորեն վեր է կենում նստած տե-  
ղից և հորակնում: Աղարեգը արագ է խմում: Վարդանովը անկա-  
տելի կերպով իր արաղը ածում է սեղանի տակ... Բեմի հետեվից  
աբաղաղը կանչում է)

ՍՈՆԱ.—(վարդանովին) Ներողություն, դոնաղ ջան, արգեն յերկ-  
րորդ աքլորն է կանչում, հարկավոր է խողերին, կովերին,  
հավերին նայել. յես դնամ մի քիչ քնեմ, առավոտը հար-  
կավոր է շատ վեր կենալ (հորակնելով գնում է)

ԱՂԱՖԵԳ.—Սաղաթել Առաքելովի կենացը, ասոված նրան յերկար  
կյանք տա. (խմում է)

ՎԱՐԴԱՆՈՎ.—(բաժակը սեղանի տակը քափելով) Չեր կենացը,  
Աղարեդ—ցանկանում եմ, վոր տրաքվելով լիկվիդացիա  
անեք ձեզ:

ԱՂԱՖԵԳ.—Ե՛հ, վոչ մի ամբողջյուն ինձ չի ողնի. սովոր եմ...  
Իսկ քո խաղեյին՝ Սաղաթել Առաքելովիցը, յես շատ ջնոր-  
հակալ եմ: Թառլանին նա յե ինձ տվել...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Դա ի՞նչ թառլան է:

ԱՂԱՖԵԳ.—Հողի ջան՛! Բա միթե, նա քեզ չի ասել...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Հա՛, թառլանը, հա՛, հա՛, հիշեցի, քո բասրակը—  
Թառլանը...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Են ել ինչպիսի բատրակ... ինչքան եմ աշխատել նրանից... Ձեռն հաշիլի...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Պրոֆսայուզի անդամ ե՞, ըո թառլանը:

**ԱՂԱՖԵՑԳ.**—Խե՛, ին՛ ին՛. դրա հետ, պրոֆսայուզի գոնովն ել չես անցկենա:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Ահա՛, յերեվի շատ չաղ աշխատող ե... Բայցի նրանից ելի շատ բատրակներ ունե՞ս...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Իմ թառլանը ամերիկանակի ցեղիցն ա, տարին հիսուն խողովներ ե ծածկում:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Նու, դա ինչ խողովներ են և ինչպես ե ծածկում:

**ԱՂԱՖԵՑԳ.**—(Ծիածնադեղ) Աղյալով... համա ծիծաղելի մարդ ես հա՛: Ձուր չեն նրա պապերն Լոնդոնի վիստափկա տարել և պերվի պրեմյան ավել...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Ո՛ւմ պապին...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Թառլանի:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—(Կողմ) Խելքս բան չի կտրում (Աղաբեզ) ինչ վեստկավիլա՞...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Խողերի... նրա պապը 20 փուլ եր կչուում... խոզ չեր, ալ բրանոպոեզ...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Եղպես ուրեմն... թառլանը խոզ ե:

**ԱՂԱՖԵՑԳ.**—Ազնվացեղ, բա դու ինչ յես կարծել:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Իսկ յես... կարծել եմ, վոր հասարակ խոզ ե:

**ԱՂԱՖԵՑԳ.**—(յերգում ե) —

Թառլանս ազնվացեղ,  
Ինձ հետ կլինի ամեն տեղ.  
Նա ինձ կառ մեծ ոգուտ,  
Վորից կանեմ յեկամուտ:  
Իմ ծախսերը լավ դիտե,  
Ժամանակին ծածկում ե,  
Ամեն ծնելիս ինձ նվեր,  
Տալիս ե դյուսթին խողեր:  
Յեթե չլիներ Սոփետը,  
Բազր կլիներ իմ կյանքը:  
Իսկ հիմի, վոր ծնի  
Քչի բազար մի հարցնի:  
Իսկական աշխատող ե  
Սիրելի ոգնական ե,

Թառլանս ազնվացեղ,

Ինձ հետ կլինի ամեն տեղ:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Խմիր, խմիր, խաղեյին, (լցնում ե բաժակը) դեղեր ներսդ, կազդուրվիր...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Հենց, վոր խողերը ծնում են, պահում եմ պատվալում, վոր վոչ, վոր չտեսնի: Տեսնեն թե չե, ինձանից կլինեն: Յեթե չլիներ Սաղաթելը—շատ շնորհակալ եմ նրանից— նրա միջոցով բոլոր խողերս բազար եմ հանում:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Ի՞սկ տեղական իշխանութունը դիտի այդ մասին:

**ԱՂԱՖԵՑԳ.**—Յեթե իմանային, նրանք, վաղուց իմ թառլանիս ինձանից կբաժանեյին: Յես նրանց աչքերին թող եմ փչել, Թե կրտել եմ—Ասել եմ, վոր նրանից ենքան եմ ոգուտ ստանում, ինչպես կոկորդիլոսից յուղը:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Բա նրանք չեն տեսնում, վոր խողերդ շատանում են:

**ԱՂԱՖԵՑԳ.**—Իսկ յես, ջանիկս—մարդկանց ցույց եմ տալիս հասարակ խողերիս: Ասում եմ,—ահա իմ խողերս: Ու վորպեսզի նալոգս չավելացնեն, նորածին խողերիս, ուղարկում եմ ծանոթներիս մոտ. ծանոթներս, բոլորն ել աղքատ դյուղացիներ են. նրանք նալոգ չեն տալիս: Յեվ վորովհետե խողերս նրանց մոտ են, յես ել նալոգ չեմ տալիս:

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—(Ջղայնացած) Խոսք չկա, շատ լավ ես խորհրդային կարգերին հարմարվում... կուլուկ շուն...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Ինչ՞...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—(Կեղծ ծիծաղով) Հենց այնպես... խմենք Աղաբեզ Հարությունով, խմիր կազդուրվիր, վոր ել ավելի բացվես: Այդպես ուրեմն վոչ վոր չլինի չզրտե...

**ԱՂԱՖԵՑԳ.**—(Հանգստացած իմում ե) Ով ել իմանում ե, նա ել լուում ե. վորովհետե, ինքն ել դրանից մի ոգուտ ե ստանում: Ինձ բարեգործի տեղ են դնում...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Ա՛յ հիմարներ...

**ԱՂԱՖԵՑԳ.**—Ովքե՞ր...

**ՎԱՐԴԱՆՈՎ.**—Յես իմ և Սաղաթելի մասին եմ ասում, հիմարներ ենք, վոր մենք ել եղպես դործ չենք բացում: Խմենք! Աղաբեզ, բացվիր հարվածային կարգով և խոսիր սրտանց, անկեղծ: Քեզ լսողի հոգում կասես արջեր են ման դալիս. կյանքումս մի անգամ եմ կուլակի հետ սրտանց խոսում...

ԱՂԱՖԵԳ.—«Կուլիակ»... Այդ խոսքն էլ մի ասի: Այսպես դեմ դիմաց նստած, մենք չպիտի այդպիսի խոսքեր ասենք...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Ինչ է՞, դու բատրակներ չունես:

ԱՂԱՖԵԳ.—Բատրակներ չատ ունեմ. չորսիս Գրիգորը, խուլ Սաչիկը, Նարզիկը, Թաթոսը և մեկ էլ չորսան Սաքոն: Այ բոլորը... Սրանց մտիկ տալը ավելի հեշտ է, քան խողերիս. նույնիսկ պրոֆսոյուզնիկներին են դավաճանում: Մեկեն մի քաղցր խոսք ասես, մյուսի գլուխը շոյես, պրագանիկներին էլ մի-մի պաղարկա տուր և դործը գլուխ կզա: Ուրիշի անտեսության վրա թքել էլ չեն ուզում, բայց ինձ մոտ աշխատում են վաղ առավոտից մինչև ուշ դիշերը:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Կոյսոզի հետ վոնց են՞. շատ է քեզ կոյսոզը նեղացնում. հա՞...

ԱՂԱՖԵԳ.—(տխուր) Ենքան էլ հեշտ չի մեզ «լիկվիդացիա» անել, ինչպես նրանք են մտածում:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Կանեն, լիկվիդացիա կանեն, ինչ՞ կարող ես անել...-

ԱՂԱՖԵԳ.—Մենք ինքներս մեզ լիկվիդացիա, կանենք:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Ադխտացիա կանես, վոր անատուններին մորթեն՞:

ԱՂԱՖԵԳ.—Ո՛ր խի՛ խի՛, ամեն ինչ արել եմ, սիրելիս... ձեռք է շատերը տատանվում են, բայց շատերն էլ արդեն մորթել են: Միամիտ կաց սիրելիս, ամեն միջոց ձեռք կառնենք, վոր անատուններին մորթել տանք, խողուկներն էլ հետը:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Ինչպես, խողուկներն է՞լ...-

ԱՂԱՖԵԳ.—Նրանց էլ, սիրելիս, նրանց էլ. առաջ դյուղացիք ինձ չհավատացին, իսկ յերբ տեսան, վոր յես էլ եմ դանակ վերցնում—նրանք էլ սկսեցին մորթել:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Այդպես! շատ լավ ես դյուղացիներին խաբում, աչխարհ լավող—անիծվ... (ձեռքերով քերանք ծածկում և սկսում ծիծաղել) դե, բոլորն էլ ուշունց կտային, վոր իմանային կոյսոզ քանդել քա աշխատում:

ԱՂԱՖԵԳ.—Յեկ տայիս են սիրելիս, հոգուս վրա հաջում են, այդ վտարորիկ չուն—չան վորդիները վոչինչ, վոչինչ, թող ուշունց տան—մենք մերը կանենք: Իսկ ուշունց տալով, նրանք վոչ ողբուս կանեն, վոչ էլ վնաս... (Բեմի հետևից լսվում է Թաթոսի շվիի ձայնը) Թաթոսը յերգում է «Մտփերս խառն եմ և այլն: Ներս է մտնում ամ-

բողջովին ցեխոտված Սաղաթելը և կանգնում դռների մեջ:)

ԱՂԱՖԵԳ.—Աստված իմ! Ո՞վ ես դու:

ՍԱՂԱԹԵԼ.—Թու՛: չի էլ ճանանչում: Ինչու չըխմավորեցիր ավանակ. նամակս չե՞ս ստացել ինչ է:

ԱՂԱՖԵԳ.—(Կուչ գալով) Ինչպես չե, սիրելի Սաղաթել... Հիվանդ, հիվանդ յեկել ես, պառկելի մինչև առողջանալը... (Վարդանովը զգաստ վեր է կենում)

ՍԱՂԱԹԵԼ.—Շնորհակալ եմ, եդ վորտեղ՞ պառկելի, կանալում, ցեխի միջին:

ԱՂԱՖԵԳ.—Ին՞չ կանալ. վեր ես ընկել ինչ է՞. թուլությունից, թե վոտոզ սլիկեց: Մեղ մոտ ցեխ է, անձրև... (Խանում է նրա պալտոն) իսկ յես պամոշնիկի հետ ամեն ինչի մասին խոսել եմ:

ՍԱՂԱԹԵԼ.—Ին՞չ պամոշնիկ...

ԱՂԱՖԵԳ.—Ա՛յ՛ էստեղ կանդնած է, քեզ ա մտիկ անում. մենք արդեն նրա հետ խորհուրդ ենք արել...

ՍԱՂԱԹԵԼ.—(Գլխի բնկնելով) Ահա թե ին՞չ... քաղաքացի եդ դո՞ւ էլ յեր վզակոթիս տվողը...

(պառլա: Բեմի հետևից Թաթոսի յերգը. հետոհետ մտնում է... Աղաթեղ գայրուքից կուչ է գալիս, վարդանտեսում է... Աղաթեղ գայրուքից կուչ է գալիս, վարդանտեսում է կատաղած հայացքով, Սաղաթելը դանդաղ ավի նայում է կատաղած հայացքով, Սաղաթելը դանդաղ առաջ գալով բառեցքը սեղմելով մտնում է վարդանտեսում վիս:)

ԱՂԱՖԵԳ.—(Չանազան ձայներ հանելով մտնելում է վարդանտես վիս) Բրիգադնիկ!

ՍԱՂԱԹԵԼ.—Ա՛, ա ա՛.

ՎԱՐԴԱՆՈՎ.—(յերկուսի ուժից բռնելով) դուք բանտարկված եք... վնասատու շներ...

ԱՂԱՖԵԳ.—(Գուրս պրծնելով, լույսը հանցցնում է. մթնույթյան մեջ կալում են: Աղաթեղ բաց է անում դուռը և գոռում:) Թաթո՛ս... Թաթո՛ս, մեկ եստեղ... դողեր, դողեր... (մտնում է Թաթոսը. մթնում շարունակվում է կոխվը:)

ԱՂԱՖԵԳ.—Ես ա՛ տես, տես նրա շորերը:

ԹԱԹՈՍ.—(ծույլ հորանջելով) Սրանցից վորի՞ն...

ԱՂԱՖԵԳ.—Վորն, վոր կաշվի պինջակով ա:

ԹԱԹՈՍ.—Ես սհաթիս, սպասիր չվիս պահեմ...

ԱՂԱԲԵԳ.—Դե շուտ Թաթոս ջան, թե չես իմ դոնադին հասածի...

ԹԱԹՈՍ.—Ես ա... ձեն մի հանի... վորտեղ ա... ահա (մթուքյան մեջ լավում է մի միջ, կռիվը վերջանում է)

ԹԱԹՈՍ.—Սմենամութ տեղն եր...

ԱՂԱԲԵԳ.—(Վառում է լամպը, հարբած Թաթոսը շոքոքալով բարձրացնում է շվին, Սաղաթեյը դժվարությամբ վեր է կենում. վարդանովը ուշագնաց պառկել է հատակին:)

ՍԱՂԱԹԵԼ.—Թո՛ւ, հողիս դուրս յեկալ... կասես յերկաթից լինի... վորտեղից է սրանց ենքան ուժ, յերբ մսի կրկիս է:

ԱՂԱԲԵԳ.—(Կատաղած նայում է վարդանովին և մտնեմում է Թաթոսինց Թաթոս, իմ աղատարարս. Թաթոս, բա ես վո՞նց յեղալ վոր իմ դոնադս քեզ եր մնացել ծածկելիք:

ԹԱԹՈՍ.—Սատանան տանի... արի ու ջոկի դրանց:

ԱՂԱԲԵԳ.—Հարբած յես յեղել Թաթոս, հարբած, վոչինչ մեր սխալը ուղղել ենք... դելը բռնված է... (մտնեմալով վարդանովին վրա, պատում է նրա շոքերը... նայում է գրպանները և համում նրա դոկումենտները) ահա, ահա նրբանք (վազում է դեպի լույսը և կարդում դոկումենտները) հենց այդպես է: Գաղաքի բանվոր է... վարդանով... ուղարկված է կոոպերատիվից... (նայում է մյուս քղթերը) սա ինչ է՞... ինտորուկցիա... անասուններին կանտրակտացիա անելու համար... Թող կորչի: (նորից դնում է Թաթոսին) տար սրան դետը դցի իր ինտորուկցիայովը (դոկումենտները բարձր պահելով) Ահա նա—լիկվիդացիան իմ ձեռքումն է: Սրանով կոոպերատիվի միջոցով մեր ձեռքը կրնինք բոլոր մասցուն (դոկումենտները տալով Սաղաթեյին) Առ Սաղաթեյ: Գնա ես մինուտիս մեր կոոպերատիվի վարիչի մոտ, ասա, վոր դու յես քաղաքի բրիգադեր վարդանովը:

ՍԱՂԱԹԵԼ.—Ինչպե՞ս...

ԱՂԱԲԵԳ.—Ասա, վոր հրաման ես բերել կենտրոնից, վոր անասուններին կանտրակտացիա չանեն, այլ բոլորին էլ մորթեն...

ՍԱՂԱԹԵԼ.—Դե դեռ տուր (վերցնում է դոկումենտները և դնում է գրպանը:)

ԱՂԱԲԵԳ.—Դե շտապ վազիր նրա մոտ... գիշերը նա ապե՞լի հիմար է և վոչինչ չի հասկանա:

ՍԱՂԱԹԵԼ.—Գնամ... (շտապ հագնվում է և գնում. պատուգա)

ԱՂԱԲԵԳ.—(Ճակատի քրտիկիքը սրբելով. խաչակնիմում է) Փառք քեզ հրաշագործ արքայից արքա... աղատվեցինք... Այժմս էլ ուրիշ վտանդ չկա, շուտ բոլորի խոզերը ձեռքս գցեմ... իսկ հետո Թաթոս ջան, կճղենք քեզ հետ, վոչ մի բրիգադեր չի ճարի մեզ (պատից հանում է դանակը) դե յես դնամ մնացածներին էլ մորթեմ, իսկ դու սրա վզից քար կախի և դցի գետը, վոր ջրի յերեսը դուրս չգա: (Վարդանովը շարժվում է) Ա՛յ ա՛յ Թաթոս, ուշքի ա գալիս, խեղդի, խեղդի եղ սաղաթեյին:

ԹԱԹՈՍ.—(Սկզբից գլխի չի ընկնում, հետո ընկնում է վարդանովի վրա և ցնցում նրան, ձեկացնելով վոր իբր քե խեղդում է) քաղաքացի այդ ինչ է, դու սատկել ես, համա վոտներդ շարժում է՞ս... Այ քեզ, այ, քեզ:

ԱՂԱԲԵԳ.—Այդպես, այդպես, առանց խոսքի վերջացրու դրա հաշիվը:

ԹԱԹՈՍ.—Նրա հաշվին առանց են էլ վերջացած ե— դա էլ նրա վերջին դպրոտան էր... Դու գնա Աղաթեյ աղա, գնա մնացածներին մորթի իսկ յես տանեմ սրան դետը դցեմ:

ԱՂԱԲԵԳ.—Չմոռանաս վզից քար կապել, թե չես ջրի յերես դուրս կգա (գնում է):

ԹԱԹՈՍ.—(մտնելով վարդանովին) Չարթներ քեռի. ամոթ ա. վորոչեցի քեզ ուշքի բերել, խեղքի յեկա:

ՎԱՐԴԱՆՈՎ.—(կամաց-կամաց ուշքի գալով) Ահա թե ի՞նչ... իսկ ո՞վ էս՞...

ԹԱԹՈՍ.—Տեղացի. չքավոր... սպրում եմ միշտ կարիքի մեջ, վորը ինձ հետևում է իմ չվաքիս պես:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Դու ես կուլակի մոտ բատրակ ես՞ (Թաթոս լսում է.) Ասա մի վախենա... նրա խոզերը թագցնում ես հա՞... (Թաթոսը վախենալով հետ հետ է գնում, վարդանովը մտնեմում է նրան և ձեռքը դնում ուսին) դե ասա. Յերեվի վախում ես, վոր քեզ դրա համար դատի կտա՞ն: Մեր իշխանությունը հիմա բանվրա—գյուղացիական է... Ժամանակին քեզ կազատենք պարազիտի ճանկերից (պատուգա:)

ԹԱԹՈՍ.—(կիսավախեցած) Յեթե չես խաբում... լավ կասեմ: Նըրա վեց խոզերը ինձ մոտ եմ պահում. յոթ յերրորդն էլ ինձ

Նազրադ ե տվել: կերն ինքն ե տալիս... Ամեն ամիս ել ինձ  
փող ե տալիս:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Ա՛, ա՛, և դու սուս ես անում հիմարի գլուխ:

ԹԱԹՈՍ.—Սուս եմ անում, բա ինչ անեմ. ասում ե յեթե գործը բաց  
անես, մեզ յերկուսին ել պատին դեմ կանեն ու լիկվիդա-  
ցիա....

ՎԱՐԴԱՆՈՎ.—(ծիծաղելով) Հա՛, հա՛, հա՛, այ ճեզ ծիծաղ, հա՛  
հա՛, հա... իսկ դու պետք եր թքեյիր նրա անամոթ յերե-  
սին. ստում են եղ աշխարհը խախող չները... նրան լիկ-  
վիդացիա կանեն, իսկ ճեզ կոլխող մտնել ե պետք, նրա  
խոզերն ել հետո սար միացրու կոլխողի խոզերին:

ԹԱԹՈՍ.—(անշարժ կանգնած. պաուզա. բռնում ե վարդանովի  
ձեռքը և սեղմում)  
ընկեր... գործարանից մեր յեղբայրուհի յունը այդպես ե՞...  
որենքով:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Բա թո խելքովդ ինչպես ե՞...

ԹԱԹՈՍ.—(Նարից սեղմում ե նրա ձեռքը) Շատ չնորհակալ եմ ըն-  
կեր... Գլխումս խելք գրիր... Անդխտակից ենք... Որենքի  
խերն ու շառը չենք ջոկում:

ՎԱՐԴԱՆՎ.—Սարուկ մի լինիր... հենց, վոր կոլխող մտնես, իս-  
կույն գիտակից կդառնաս... Ա. ա առայժմս կարդա... (ձեռ-  
քը տանում ե գրպանը և վախեցած շփոթվում ե) Այս ի՞նչ  
ե (գրպանները փնտռում ե) վորտեղ են դոկումենտներս:

ԹԱԹՈՍ.—Հենց ես սհաթիս թոցրին...

ՎԱՐԴԱՆՈՎ.—Ովքեր...

ԹԱԹՈՍ.—Են հաստավիզը, վոր ճեզ հեա կովում եր:

ՎԱՐԴԱՆՈՎ.—Բա ինչ ես ձենդ փորդ դցել դժբո՛ւ վորտեղ ե նա:

ԹԱԹՈՍ.—Կոոպերատիվի վարիչի մոտ. Աղաբեզը եղպես հրա-  
մայեց:

ՎԱՐԴԱՆՈՎ.—(ցրված) Ախ դո՛ւ հիմար գլուխ... կոոպերատիվը  
վորտեղ ե՞...

ԹԱԹՈՍ.—Շոսսեյի մոտ... դուրս դաս թե չե վաղիր գյուղամեջը.  
աջ կողմդ ջրհորն ե, իսկ դեմացը կոոպերատիվի վարիչն  
ե ապրում (վարդանով վագում ե դեպի դուռը:) (Թաթոսը  
մեմակ) Սպասիր Աղաբեզ աղա ճեզպես պարազիտի ենպես  
մի խող շանց սամ, վոր թո թաուլանիցը յերեք անդամ

հաստ լինի... լիկվիդացիա... կանեմ! (վերցնում ե շփե  
եկագելով յերգում:)

Քլուխս ել մութ չե ու խառն  
Այժմս սիրելի յե ինձ այս աշխարհ  
Մարոյից լավ Մարոյից սիրուն  
Չկա այս—արար աշխարհում:  
(գնում ե. բեմի յետեվից լավում ե նրա նվագի ձայնը:)

(վարագույր)

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սեղրակ նագարյանի խրեիքը. վաղ տուվում ե նագարյանը—  
Քեան ե անկողնում

(Բնի մեջ) բողի 50 կիր... ողեկորն 16 ֆլակոն... կենդրոնից դե-  
րեկալի... ներողություն ա... Ե՛յ ով անդամ չի թող չը խձկվի...  
(պատուհանը քակում են) Ասում եմ միք խցկվի... (ավելի ուժեղ  
քակում են պատուհանը. նագարյանն աչքերը բաց ե անում) Սա ինչ  
ա՞... Ով ա խցկվում (աչքերը տրորելով) Էստր ապրանք չենք բաց  
թողնում, վխաղձոյ եմ... (չորս կողմ նայելով) Վխաղձոյ եմ... Եդ  
ուխ՞ եղտեղ...

ՍԱՂԱԹԵԼ.—(դռան հետեվից) Բաց արա շուտ!

ՆԱԶԱՐՅԱՆ.—(հեգնելով) Շո՛ւտ... սրան տեսեք... համ գիչեր,  
համ ցերեկը հանդիստ չունենք, տանջվում ենք ձեր ձեռ-  
քին... ապառոզնե՛ր... իմ արյունս դուք ոտքոտեցիք... դժա

ՍԱՂԱԹԵԼ.—Դե շուտ առանց խոսքի, բաց արա:  
հեա:

ՆԱԶԱՐՅԱՆ.—(հեկվելով ձեռքին նստում ե) վոնց թե շուտ... ա-  
ռանց խոսքի... ո՞վ եմ, կոոպերատիվի վարի՞չ թե խող  
պոչ... Ձեզ հուպ կամ (պաուզա. դռան հետեվում լուռ-  
բյուն: նագարյանը շուտ ե գալիս մյուս կողքին վերմակը  
գլխին փաշելով.)

ՍԱՂԱԹԵԼ.—Ասում եմ բաց արա, բրիզադիր... քաղաքից:

ՆԱԶԱՐՅԱՆ.—(արագ վեր թռչելով, նստում ե շրմած հետո վագում  
ե դեպի դուռը) կենտրոնի՞ց...

ՍԱՂԱԹԵԼ.—Հա՛, հա՛, շուտ արա!

ՆԱԶԱՐՅԱՆ.—Ես բողբոջի... (բաց ե անում. մտնում ե Սագա-  
թելը)

ՍԱՂԱԹԵԼ.—Ես ինչ ե, ձեզ մոտ վոչ մի կարգ չկա:

ՆԱԶԱՐՅԱՆ.—(շապիկ վարդիկով. կտրատվում է) Գիշերվա կեսին ի՞նչ կարգ կարող ե լինել:

ՍԱՂԱԹԵԼ.—Լավ տես արդեն առավոտ ե:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Ներեցեք, նազրուղիս շատ ե, դրանից ե, վոր էսքան պինդ քնել եյի խե', խե', խե,

ՍԱՂԱԹԵԼ.—Լավ, լավ գլուխս մի ցավացնի, ահա քեզ մանդատ:

ՆԱԶԱՐՅԱՆ.—(Արագ վերցնում է մանդատը, մրք-մրքալով նայում է մանդատին) «Տրվում ե սուչնը...» այդպես (շրջում է սենյակում) Ներողութուն, նստեցեք (վերցնում է աք-տու և առաջարկում նրան, սկսում է սենյակը կարգի գցել): Մեր գործն ե ցիրկուլյարներ և հաշիվներ, զահլաս տարել ե... Ներողութուն, վոր սպիտակեղեններովս եմ: (Ման գալով հագնվում է) Գուցե կհրամայեք սամավար դցե՞՞լ, նոր ծնած խողովներից մեկին մորթ... (զայելով իրան) Այսինքն յես վոչ մի... նույնիսկ մատով չեմ դիպել ել ուր թե մորթեմ... Յիրկուլյերներով ենք դեկավարվում... խոզը մինչեվ 3 տարեկան մորթե՞ն... Չե, չե! Մեզանում խիստ ե...

ՍԱՂԱԹԵԼ.—Հարկավոր չի, ժամանակ չունեմ... Յես հրաման ունեմ Յենտրոսայուղից...

ՆԱԶԱՐՅԱՆ.—(Զինվորականի պես պատիվ է բռնում) լսում եմ!

ՍԱՂԱԹԵԼ.—Պետք ե մեծ քանակությամբ խողեր մորթել...

ՆԱԶԱՐՅԱՆ.—Վորքո՞ն կհրամայեք...

ՍԱՂԱԹԵԼ.—Ինչքան շատ ենքան լավ, բայց միայն շուտ... մինչեվ ժամի 12-ը պետք ե պատրաստ լինեն:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Ես ահաթիս, իսկ խողուկներին...

ՍԱՂԱԹԵԼ.—Անխտիր!

ՆԱԶԱՐՅԱՆ.—Ուրեմն հին ցիրկուլյարները և յեվս...

ՍԱՂԱԹԵԼ.—Մի ցիրկուլյար կա հիմի—անխտիր մորթել բոլոր անասուններին:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Ես բողեյիս... (վագում է դեպի դուռը և գոռում)

Միսա՛կ, Միսա՛կ.

ՉԱՅՆ ԲԵՄԻ ՀԵՏԵՎԻՑ.—Ի՞նչ ե...

ՆԱԶԱՐՅԱՆ.—Շտապ կարգով, վաղիբ բոլոր տները և ասա, վոր կենտրոնից հրաման կա, վոր խողերին մորթեն և տան կողերատիվին:

ՉԱՅՆ.—Սողուկներին ե՞լ...

ՆԱԶԱՐՅԱՆ.—Սողուկներին ել: Շուտ 100% ցիրկուլյարը անց կացրու: Սոցսորեն վնասվանի ա ով շատ մորթի—պրեմյա կատանա—մի բոթուկա արաղ և մի կտոր սապոն. դները բարձրացել են. դե շուտ! հարվածային կարգով:

ՉԱՅՆ.—Գնում եմ, գնում, սպասիր տրեխներխ թեղերը կապեմ:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Շուտ առանց տրեխի ել կարող ես յուլա գնալ... հարվածայնութունդ շանց տուր:

ՉԱՅՆ.—Գնում եմ:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Լողեր... Մաքսիմալնի տեմպեր են հարկավոր, իսկ սրանք խանդարում են: Այսպիսի գործը համար յես ամեն ինչ կանեմ (ուղիղ կանգնելով Սաղաթելի դիմացը)

Չեկուցում եմ, կենտրոնի ցիրկուլյարը շտապ կարգով պատրաստ կլինի:

ՍԱՂԱԹԵԼ.—Գո՞վում եմ... Այսքան տարի սպեկուլյացիայով... թո՛ւ, կոտպերացիայում աշխատել եմ, բայց այսպիսի արագ աշխատանք չեմ տեսել:

ՆԱԶԱՐՅԱՆ.—Դեռ ավելի ե լինում... լսել ե՞ք մաքսիմալնի տեմպ, մի սեկունտում (յերգում է):

Յիրկուլյարը ստանում եմ

Մի մինուտում կատարում եմ

կատարում եմ հրամանը

կոտպերատիվի կենտրոնի:

Ամեն ինչ տեղն ե կարգին,

Մաշինի պես ե, սարքին

կտամ սարավկա ամենքին

Ամեն մեկին առանձին:

Ապպարատն եմ վոնց, վոր մաշին

Դիսցիպլինան խախտող չկա

Պետ պլանից հետ չի մնա

Պլաններն իմ հարվածային:

Հաշիվներս ուղիղ ճիշտ ե

Պլանիս պես, սարքին, չիկ ե,

Ու գործերս կարգի կնկնեն:

Թիվը, թվին կավելացնեմ,

Ակտիվի մեջ ակտիվիստ եմ

Կոտայերատիվի լավ վարիչ եմ  
Ամբողջ Խորհրդային միութենում  
Իմ նմանը հեշ չի ճարվում :

**ՍԱՂԱԹԵԼ**—(Կեղծ հրեմիլանիով) Հիանալի յե, հողիս ուրախ ե :  
Կարծես աշխատում ենք նրա համար, վոր մենակ հաշիվ  
տանք, նույնիսկ լացս դալիս ա :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—(տոնակալն) Ե՛ր Ե՛ր, ինձ նման աշխատող իսկի չկա  
... Հետո յես ձեզ բոլորը կահատատեմ, իսկ այժմս իբն-  
դրում եմ, ձեր թույլատրությունը, դուրս դալու մի բա-  
ցատրական ճառով և բարձրացնելու մասսայի ենտուղիազ-  
մը : բացատրել անասուններ մորթելու մասին, վորովհեան  
բոլորը չեն սեղենա մորթել... Մեր ժողովուրդը ազեա է,  
ցիրկուլյարներ չի կարդում...

(Ներս են մտնում, Յեղտան քաջին, Մարոն և Մարգիտը) :

**ՅԵՂՍԱՆ ԲԱԶԻ**—Ահա նա! Ամբողջ դյուղը վտաքի յես հանել, իսկ  
դու քեֆ ես անո՞ւմ... Դու ի՞նչ իրավունք ունես եղպես  
հրամաններ տալու սատանի ճուտ!... (բռնում է երս ուձիք  
և բափահարում)

**ՆԱԶԱՐՅԱՆ**—Սպասիր, սպասիր, դժվել էս ինչ ե՞ր յախաս բաց  
թող (ձեռքերը կրծքին խփելով) Յես ո՞վ եմ, հա՛, ո՞վ եմ  
յես :

**ՅԵՂՍԱՆ**—Խողի ճուտ, դժբո, սատկած խող :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—Ի՛նչ : Ձեզ բոլորիդ կվոչնչացնեմ համաձայն կենա-  
րոնի լրիվ կարգադրության... Տեմպերը պակասեցնե՞լ...  
Սոցրեկոնստրուկցիան չանցկացնե՞լ. Այո, ըր մասին,  
յես մի դիմում կզրեմ Սայուզմյասին...

**ՅԵՂՍԱՆ**—Դրեր, վախեցող չկա... Դյուղխորհրդի վորոշումը  
քեզ համար խաղալիք է, ինչ ա՞. կոնտր յես դնում... բեղ-  
նյակները և միջակները կոլխող են մանում, սերմացուն  
համաձայնացնում, իսկ սա անասունների մորթելու հրա-  
ման է տալիս :

**ՄԱՐՈ**—Կուլակի ազենտ է :

**ՍԱՂԱԹԵՄ**—Թո՛ւ, մեկը-թե մորթեր, մեկելը, մի մորթեր. մեկը  
թե սաղ-սաղ ծախիր, մյուսը չե... Ամեն ոք դանակը ձեռն  
ես վերցնում ու ելի տեղն ես դնում :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—Բոլորին էլ մորթիր :

**ՅԵՂՍԱՆ**—Կմորթես, մենք էլ քեզ կոլխող չենք ընդունի :

**ՍԱՂԱԹԵՄ**—Ձեզանից վորն է՞ վլաստը...

**ՍԱՂԱԹԵԼ**—Յես կենտրոնի ներկայացուցիչն եմ :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—(ցույց տալով Սաղաթելին) Ամենաբարձր վլաստը :

**ՍԱՂԱԹԵԼ**—Ընկերներ! չեք մանում բանվոր դտակարգի դրու-  
թյունը- բանվորները քաղաքում մուկ են ուտում, գորտե-  
լը տալնով են ստանում :

**ՅԵՂՍԱՆ**—Սուտ ե! Ձեմ հովատում : (Սարգսին) Ինչպես դյուղ-  
խորհրդի անդամ, ստում եմ, վոր անասուններիդ չմոր-  
թես :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—Մորթիր, Սարգիս!

**ՅԵՂՍԱՆ**—Չմորթես!

**ՄԱՂԱԹԵԼ**—Մորթիր!

**ՄԱՐՈ**—Չմորթես!

**ՍԱՂԱԹԵՄ**—(հրելով նրանց) Բավական է, յես իմ գլխուս ունեմ,  
իմ սեփական խելքը, կեսը կմորթեմ և ազ կդնեմ, կեսն  
էլ կոլխողին կտամ : Մնաք բարով, իրար միս կերեք (զը-  
նում է) :

(Կեվիհեվ մտնում է վարպետովը, Սաղաթելը նաև տեսնելով առ-  
կրկատի հեռանում է) :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Վորտեղ է կոտայերատիվի վարիչը :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—Մենք այտեղ ենք... Ի՛նչ է հարկավոր :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Յես Բազվից, բրիգադիր եմ. իմ գոկումենտնե-  
րով այտեղ է յեկել մի սպեկուլյանտ!... Յեղել է՞ նա ձեզ  
մոտ :

(Բոլորը զարմանքից բերանները բաց են արել)

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Պատասխանիր, հարվածային կարգով :

**ՆԱԶԱՐՅԱՆ**—(չփութելով) Ինչպե՞ս, ինչպե՞ս թե սպեկուլյանտ!

դոկումենտները! (չորս կողմ նայելով) բա ուր է՞ նա...

**ՅԵՂՍԱՆ**—(նազարմովին) Ե՛ր մեր տղա, սպեկուլյանտի ձանկն ես  
ընկե՞լ...

**ՆԱԶԱՐՅԱՆ**—(սեղանի վրայից վերցնելով դոկումենտները. Չը-  
փորված.) Դոկումենտները, դոկումենտները (ուզում է  
կարդալ) :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—(խելով նրա ձեռքից) Ի՞մա է (դնում է գրպանը)

դու կոտայերատոր չես, այլ ուտիլ-սիրյո : (յերզում է)

Խոսք չկա, վոր դու ընկեր

Բյուրոսիրատ ևս անտարբեր

ՅԵՂՍԱՆ.—Այ Նազարով, դու Նազարով  
 Խելք թուցրել ես Նազարով:  
 ՆԱԶԱՐՅԱՆ.—Կատարում եմ կենտրոնի պլանը  
 Ցնդված չեմ յես, ներողութիւն:  
 ՎԱՐԴԱՆՈՎ.—Չստուգեցիր, չմտածեցիր  
 Ու անցնողին հավատացիր:  
 ՄԱՐՈ.—Կուլակի հետ վերցրիր դանակ,  
 Կոլխոզ քանդել ուղեցիր համբակ:  
 ՆԱԶԱՐՅԱՆ.—Իմ սխալը, շտապ կարգին  
 Կուղղեմ ինչպես հարվածային:  
 ՄԱՐՈ.—Ել հերիք ե սրանով դբաղվենք  
 Կուլակին պատժելու պատրաստվենք:  
 ՅԵՂՍԱՆ.—(Վարդանովին) Դու կխոսես կոլխոզի մասին,  
 Վոր չմորթեն են խողերին:  
 ՆԱԶԱՐՅԱՆ.—Սպասեցեք ներողութիւն  
 Սխալներէս արեք թողութիւն:  
 ՎԱՐԴԱՆՈՎ.—Կուլակի դռան մոտից  
 Են սպեկուլյանտի հետեւից:  
 ԲՈՂՈՐԸ.—(Նազարյանին) Իսկ քեզ, վորպես ուտիլիտը  
 Կմաքրենք մենք շատ շուտով  
 Դե հավաքվենք ժողովի  
 Ու չխոսենք անտեղի (գնում են: պաուզա)  
 ՆԱԶԱՐՅԱՆ.—(Ելում է) Յես ո՞վ եմ (մրթմրթում է) Ուտիլ—սիր—  
 յո... Հարվածային կարգով...

(Վարագույր)

ՊԱՏԿԵՐ ՎԵՅԵՐՈՐԳ.

Աղաքեգի խրհիքքը. բեմի հետեւից լսվում է Թաքնոսի յերգի  
 ձայնը, Աղաքեգը նայում է պատուհանից:  
 ԱՂԱԲԵԳ.—(պատուհանից) Թաթո՞ս! այ Թաթո՞ս:  
 ԹԱԹՈՍ.—(պատուհանի մոտ դրսից) Բարով, ինչ ա՞:  
 ԱՂԱԲԵԳ.—Արի ներս:  
 ԹԱԹՈՍ.—Կարելի ա (մտնում է պատուհանից)  
 ԱՂԱԲԵԳ.—Ի՞նչ արիւր են մեռածին, զաւոզից յեկողին:  
 ԹԱԹՈՍ.—(յերգում է) Ինչ վոր արի նրա հետ  
 Իրանից լավ չեր լինի

Ու վարվեցի նրա հետ  
 Քեքիդ ուղածիդ նման:  
 ԱՂԱԲԵԳ.—Բացադրի հասկանալի  
 Վոր լինի ուրախալի:  
 ԹԱԹՈՍ.—Հենց, վոր տարա դիակը  
 Սառը ջրում թաղելու  
 Իրեգադիրն առաջ ցցվեց  
 Ու մի լավ ինձ դնգստեց:  
 ԱՂԱԲԵԳ.—Միթե՞ նրան դու բաց թողիր  
 ԹԱԹՈՍ.—Միբերիս հլա սպասիր,  
 Իրա հերթին կիմանաս.  
 Տարավ բերավ պարզապես  
 Վզակոթիս, այ ես պես:  
 (խփում է Աղաքեգի վզակոթին) Ստացիր հարվածային կարգով  
 (Աղաքեգը ուշագնաց վեր է ընկնում) Ուշքը գնա՞ց... (նայում է իր  
 բռունցքին) դուրս է գալիս, վոր կուլակին, հարկավոր է կուլակով  
 վերջացնել (կռակալով) Աղաքեգ աղա, վեր կաց, հանաք արի,  
 զարթնիր, մենք հլա քեզ լիկվիդացիա ենք անելու (ցնցում է նրա  
 ուսերը) Ե՛, հիմա կուլակները շուտ են ուշագնաց լինում: Սպա-  
 սիր, հիմա յես քեզ ուշքի կբերեմ: (մի աման ջուր է բերում և  
 սկսում փչել նրա վրա) վոչ մի ուշադրութիւն իմ մայրական դուր-  
 դուրանքին (վտից քաշելով) Ե՛յ, Աղաքեգ, զարթնիր—լիկվիդա-  
 ցիա. և լիկվիդացիան ել չի սգնում (ցաղունով խոտուտ է տալիս նրա  
 քիքը, Աղաքեգը փոշտում է և ուշքի գալիս:) Յես հլա բոլորը շա-  
 սեցի քեզ, Աղաքեգ, համա դու շուտ պառկեցիր... հա, վորտեղ  
 կտրեցի պատմութիւնս...  
 ԱՂԱԲԵԳ.—Եդ ինչ ա՞, դու կուլել ե՞ս ուզում:  
 ԹԱԹՈՍ.—Չե, հենց ենպես, յես որինակ բերի:  
 ԱՂԱԲԵԳ.—Իմ արած բարութիւնս փոխարե՞ն...  
 ԹԱԹՈՍ.—(զննելով իր բռունցքը) Դու ինքդ ես սովբեցրել ինձ Ա-  
 զաքեգ, բոտոնցքով գլուխ ջարդել... Չե, վոր յես որի-  
 նակ բերի, բռունցքս ծանր է, դարդ ու բալա ա ինձ հա-  
 մար, ում մի պուճուր կպցնում ես, մեկել տեսնես, ուշքը  
 դնաց:  
 ԱՂԱԲԵԳ.—Ի՞նչ արիւր բրեգադիրին, պատմիր:  
 (Այլայլված մտնում է Սաղաքեղը)  
 ԱՂԱԲԵԳ.—Ինչ ա՞, եդ ինչ է պատահել:

**ՍԱՂԱԹԵԼ.** — Բրիգադները սող ե, կորանք, բասդրել, բասդրել են  
անելու մեզ (հավաքում ե իրերը իր չամառամում):  
**ԱՂԱԲԵԳ.** — (Թաքոսին) Թոթոս, գետում խեղդեցի՞ր (ուզում ե  
հարձակվել նրա վրա)  
**ԹԱԹՈՍ.** — Պատահում ե, վոր մեռածը հարություն ե առնում:  
**ԱՂԱԲԵԳ.** — Պատահում ե:  
**ԹԱԹՈՍ.** — Բրիգադները սատանի նման են (համոզեցուցիչ սա-  
նով) Յեթե յես քո թառլանիդ եղպես չարչարեցի, նա հի-  
մա յերեք անգամ սատկել եր:  
**ԱՂԱԲԵԳ.** — Թառլանի՞ն, իմ թառլանին, լեզուդ պապանձվի հա՛,  
**ՍԱՂԱԹԵԼ.** — Եզ ինչ ե՞, դուք ուզում եք, վոր մեր արյունը ծծեն,  
մեռնելը մտներդ եք գցել, շուտ վախճենք:  
**ԱՂԱԲԵԳ.** — (վազելով դեպի դուռը գոռում ե) Ավանես, հեյ Ավա-  
նես, կարծիր ձին թամբիր... սեվուկն ել... շուտ:  
**ՍԱՂԱԹԵԼ.** — Լալ ձիեր ե՞ն... կհասցնեն տեղը...  
**ԹԱԹՈՍ.** — Ո՛ր ո՛, Աղաբեգ աղի ձիերն կրակ են կրակ- գյուլուլան  
ել հետեվից չի հասնի:  
**ՍԱՂԱԹԵԼ.** — (հանում ե ատրճանակը և լցնում) կկրակեմ, թե ար-  
դարի և թե մեղավորի վրա Աղաբեգ դու ել վերջոր աոր-  
ճանակ: (մտնում ե Սոնան):  
**ՍՈՆԱ.** — Եզ վորտեղ եք պատրաստվում: Փախչումեք հա՛...  
**ԱՂԱԲԵԳ.** — Կորիր սատանի ծոցը, մի ընկնիր վտաներիս պակ  
(Շտապ հագնվելով) վորտեղ ե իմ ատրճանակը (վերց-  
նում ե ատրճանակը և պահում ե ծոցում):  
**ՍԱՂԱԹԵԼ.** — Այնտեղ, գյուղամիջում, այնպիսի աղմուկ են բարձ-  
րացրել, կարծես ազվես ե հավարուն մտել... Շուներ աի-  
րոջ չի ճանաչում, հագիվ կարողացա ծղկվել:  
**ՍՈՆԱ.** — (Սաղաբեղին) Ի՞նչ են անում ենտեղ:  
(Սաղաբեղը բացատրում ե նրան շարժ ու ձեվելով):  
**ԱՂԱԲԵԳ.** — Ին թառլանս... թառլանիս ձիու վրա նստեցնել չի լի-  
նի...  
**ԹԱԹՈՍ.** — Կջարդի ձիու մեջքը:  
**ԱՂԱԲԵԳ.** — Նրանք կվերցնեն իմ թառլանիս, կոլխոզ կտանեն...  
Չեմ տա... նա իմն ե... իմը... իմ արյունս... Չեմ տա  
(վերցնում ե դանակը) Յես ինքս, ինքս իմ սեփական ձեռ-  
ներով իմ թառլանին կմորթեմ... (ուզում ե գնալ):  
**ԹԱԹՈՍ.** — (բռնում ե նրա ձեռքը) Աղաբեգ! գժվել ես ինչ ա՞: Եզ-

պիսի գոմեչին կմորթե՞ն... բա ել յես ինչացու յեմ... Յես  
քո թառլանիդ մի ենպիսի տեղ թաղցնեմ, վոր բրիգադեր  
չե, սատանան ել չի գտնի:  
**ԱՂԱԲԵԳ.** — (Առաջ գալով) Թաթոս ջան! (բնկնում ե նրա վտանե-  
րը աղաչում): Աղաթիր նրան իմ թառլանիս (լաց ե լի-  
նում) հողիս մարմնիցս հանում են:  
**ԹԱԹՈՍ.** — (բարձրացնելով Աղաբեգին) Դու վեր կաց, Աղաբեգ  
աղա — քո թառլանին յես կտանեմ ինձ մոտ, իսկ գիշերվա  
կեսին ժամը 12-ին, դու կգաս ինձ մոտ ամբարը, կբարձ-  
րացնեք ձիուն և կտանես թառլանիդ, վորտեղ քե՞՞՞ր կու-  
ղի. կպահեմ մեշոկում հասկացա՞ր:  
**ՍԱՂԱԹԵԼ.** — (պատուհանի մտից) Դալիս են, դեպի մեր տունը:  
Ում կյանքը թանգ ե թող ապատվի:  
**ՉԱՅՆ.** — Չիանք պատրաստ են:  
**ԱՂԱԲԵԳ.** — Գիշերը ժամը 12-ին կգամ, իսկ հիմա դեպի անտառը  
(վազելով գնում ե):  
**ՍԱՂԱԹԵԼ.** — Ե՛, Սոնա ջան, աղոթիր մեզ համար, վոր ինձ  
աղաթի իմ ձիս. յեթե մի բան պատահի կկրակենք  
(հանում ե ատրճանակը և ողում ունում, գնում ե դեպի  
դուռը) Մնաք բարով (ուզում ե գնալ: Բեմի հետեվից  
լսվում ե հեռացող ձիերի սմբակներն ձայնը):  
**ՍՈՆԱ.** — Փախավ իմ աչքիս զրոզը (խաչակնեցելով) ենպես կորչես,  
վոր ել թողդ չերեվա...  
**ԹԱԹՈՍ.** — (բռնում ե Սաղաբեղի քեփը և վեր գցում: շտապ վերց-  
նում ե նրա ատրճանակը նստում ե նրա վրա, ատրճանակի  
փողը դեմ ե անում նրա հետեվին): Աղաթիր ինձ, իմ  
նժույղս, նո՛, կանգնիր չորս վտաներիդ վրա, դեպի ամ-  
բարը, մորքուր Սոնա, դունեք բաց արա:  
(Սաղաբեղը «չարս վտաի վրա» տանում ե Թաքոսին դեպի ամբարի  
դռները):  
**ՍՈՆԱ.** — Թաթոս! գժվել ես ինչ ա՞:  
**ԹԱԹՈՍ.** — (ատրճանակը նրան դեմ անելով) բաց արա դունեքը,  
թե չե, կսպանեմ քեզ:  
**ՍՈՆԱ.** — (անբավական բաց ե անում դռները)  
**ԹԱԹՈՍ.** — (հչում ե Սաղաբեղին և յերգում)  
Դե թոիր իմ ձի, սլացիր շուտով,

Տար ինձ դեպ կոլխոզը մեր գյուղի :  
Ուզեցիր քանդել սլանը կոլխոզի  
Ու լցնել ջիբերդ փողերովը խողի :  
Նո՛ս , իմ նժույզս դե շուտ սլացիր ,  
Ամբարի դռան , դու շուտով հասիր ,  
Ուզեցիր ընկնել դրախտ յերկնային ,  
Բայց ավա՛ղ , ընկար գժողք յերկրային :

(Խանելով ամբարի դռանը , Թաթոսը իջնում է «ձիուց» վտռով հրում է Սաղաթելին ամբարը և դուռը կողպում : Սոնան նույն անբավական դիրքով կանգնած է : Թաթոսը մոտենում է նրան և ատրճանակը դեմ է անում նրա քթին : Սոնան աչքերը չափ չոքում է հատակին : Թաթոսը հեռանում է և ատրճանակը դնում է գրպանը :)

**ԹԱԹՈՍ**—Ուրեմն , այս դիչեր ժամը 12—ին իմ ամբարում :

**ՍՈՆԱ**—(աշխուժանալով) Եղ ի՞նչ կլինի ամբարում , Թաթո՞ս...

**ԹԱԹՈՍ**—Հիմակվանից ասել չի կարելի :

**ՍՈՆԱ**—Դե լավ չի կարելի , չի կարելի , (յերգում է)

Ախ իմ Թաթոս անուշիկ  
Ջան իմ Թաթոս սիրունիկ :  
Հեքիաթի դռած էքիթ ես  
Ինձ համար անուշիկ ես :

**ԹԱԹՈՍ**—Թող , Սոնա սիրունատես ,  
Հոգիս չի ձգտում դեպի քեզ ,  
Գիտեմ դու ինչ պտուղ ես  
Թաթոսին , դու խարող չես :

**ՍՈՆԱ**—Այժմս ազատ ինչպես թռչուն ,  
Մարդս ճգեց , ել չի դա տուն .  
Կլինեմ ես կին իմ Թաթոսի  
Կապրենք մեկ տեղ մենք միասին :

**ԹԱԹՈՍ**—Չե՛ր , Սոնա եղ նոմերը չի անցկենա :

**ՍՈՆԱ**—Մի սպանի , ինձ իմ ջանիկ  
Առ ահա քեզ ես մի պաչիկ  
Չեմ վախենա յես տեսողից  
Ու դուր տեղը բամբասողից :

**ԹԱԹՈՍ**—Չեմ ուզում հարկավոր չի : (բեմի հետեվից լսվում է ազմուկ) դե գնա Սոնա կոլխոզնիկները գալիս են... շուտ արարադ քաչիր : (Սոնան գնում է : Ներսեմ մտնում , վար-

դանովը , Յեղսան բաջին , Մարոն , Սարգիս և կոլխոզնիկները) :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Թաթոս , բա , վորտեղ է կուլակը :

**ԹԱԹՈՍ**—(Ժպտալով ցույց է տալիս յերկու բռունցքները) ա՛յ ընկեր վարդանով :

**ՅԵՂՍԱՆ**—(մոտենում է Թաթոսին և շարժում նրա ուտերը) հայտնել ես նրան հա՞ , ստտանա , դրա համար շուտ վազեցիր Եստեղ...

**ՍԱՐԳԻՍ**—Միթե Թաթոսը մինչև Եստեղ է հասել : (Թաթոսը շատ հանգիստ հանում է ատրճանակը և դեմ անում Յեղսանի քթին : նա վախից քազնվում է)

**ԹԱԹՈՍ**—Տեսել ե՞ք Ֆոկուս—մոկուս

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Ձե Թաթոսը Եստեղս բան չի անի :

**ԹԱԹՈՍ**—(մեկնում է ատրճանակը վաղիանովին) վերցրու ընկեր բրիզադիր , իմ կոլխոզի անդամավճարը... քեզ խարել չի կարելի , դու ամեն ինչ տեսնում ես :

**ՄԱՐՈ**—Եղ ո՞ւմ ունիովերն ե :

**ԹԱԹՈՍ**—Ես մարդը , բռնել ա կես մեռած , կես , սաղ ես մարդուն (բայց է անում ամբարի դուռը և դուրս անում Սաղաթելին) ա՛յ , տեսեք ընկերներ : Փահլեվան , դասար և Ֆոկուսնիկ խողերին իրանց պոչերիցն է ճանանչում :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Ժանդին յուղ է հարկավոր :

**ՍԱՐԳԻՍ**—Կոխեք դրան ենտեղ , թող միքիչ յեղերը հալի :

**ԹԱԹՈՍ**—Համեցեք , մտիր տեղը , պարոն սպեկուլյանա :

**ՅԵՂՍԱՆ**—Բա գլխավորը , Աղաբեզը :

**ԹԱԹՈՍ**—Ինքն իր վոտովն է դալու :

**ՄԱՐՈ**—Բա ինչու դու նրան բաց թողիր :

**ԹԱԹՈՍ**—Յերկուսի ձեռքին ել ունիովեր կար , սպում է յի յերկուսին ել բռնել , համա շարաքեց : Մարո ջան ! դարդ մի անի , յերկրորդ գալակը իմ ամբարումս է լինելու : Հավատում ե՞ս ընկ . վարդանով :

**ՎԱՐԴԱՆՈՎ**—Հալատում եմ :

**ԹԱԹՈՍ**—Սրիենք , հարվածային կարդով : Մարդիս , ասում են վոր դու խողերիդ աղ դրած ես կոլխոզ բերում :

**ՍԱՐԳԻՍ**—Թաթոս , պտտավիս վրա մի ծիծաղիր , տղիս ուղարկել եմ քաղաք , վոր մի լավ աղնվացեղ խող առնի . յերբ բերի ,

առանց մի խոսքի կոլխոզ կբերեմ, համ իմ վնասներս կը-  
ծածկեմ, համ ել կոլխոզին ողուտ կտամ:

**ԹԱԹՈՍ**.—«Ե՛շ մի գրա, դարուն կ'գա»—դե ննա մ'ինչե քս խո՞ւ  
դա, էնա Ակարեզի թառանը մեր ձեռքին ա ելի:

**ՅԵՂՍԱՆ**.—Աղաբեզը նրան չի՞ մորթել:

**ԹԱԹՈՍ**.—Ես ձեռններովս եմ դանակը նրա ձեռքից վերցրել. Սաղ ա  
թառանը, սաղ:

**ՄԱՐՈ**.—Այ թե Թաթո՛ս,

**ՎԱՐԴԱՆՈՎ**.—(յերգում է) Թաթոսը ճարպիկ աղա յե

Կուլակի պլանը քանդոչ է,  
Գործը խճճեց թոկի պէս  
Թաթոսը մեր պարզերես:

**ՄԱՐՈ**.—Ա՛յ թե Թաթոս:

**ԲՈՂՈՐԸ**.—Կեցցե Թաթոսը մեր

Կեցցեթառանը մեր,

**ՍԱՐԳԻՍ**.—Այ լա՛վ գործ, հիմա, վոր մի լավ զավոյ կսարքենք:

Յերգենք ու խնդանք  
Թաթոսին գովք տանք:

(Մարոն և Թաթոսը պարում են, մնացածները ծափ են տա-  
լիս և յերգում:)

**ԹԱԹՈՍ**.—Բոլորս մենք կոլխոզ մտնենք,

**ՍԱՐԳԻՍ**.—Ու անասուն համայնացնենք,

**ՅԵՂՍԱՆ**.—Կուլակի անուն ջնջենք

**ՎԱՐԴԱՆՈՎ**.—Սոցիալիզմը կառուցենք:

**ՄԱՐՈ**.—Ե՛յ!

**ԲՈՂՈՐԸ**.—(կրկնում են «կեցցե Թաթոսը մեր» և այլն)

**ՍԱՐԳԻՍ**.—Լախնացնենք մեր ցանքերը

**ՅԵՂՍԱՆ**.—Վոր շատանան բերքերը,

**ՄԱՐՈ**.—Լախնացնենք մեր գոմերը

**ՎԱՐԴԱՆՈՎ**.—Ազնվացնենք խոզերը:

**ԹԱԹՈՍ**.—Ե՛յ!,

(բոլորը կրկնում են «կեցցե Թաթոսը մեր» և այլն)

**ՍԱՐԳԻՍ**.—Սարքենք խոզի կոլխոզ՝

**ՅԵՂՍԱՆ**.—Վոր ստանանք բոլ խոզ,

**ԹԱԹՈՍ**.—Պլանը լրիվ կատարենք,

**ՎԱՐԴԱՆՈՎ**.—Ու սոցիալիզմը սարքենք:

**ՄԱՐՈ**.—Ե՛յ! (բոլորը կրկնում են)

**ՅԵՂՍԱՆ**.—Կոլխոզի սերս շարքերը

**ՍԱՐԳԻՍ**.—Բանվորական բրիգադները

**ՄԱՐՈ**.—Վնասատու կուլակին

**ՎԱՐԴԱՆՈՎ**.—Մաքրենք յերկրի յերեսից:

(Բոլորը սկսում են պարել և կրկնել կեցցե Թաթոսը մեր)

(վարպույր)

**ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ**

Թաթոսի ամբարը: Գիշեր է. մտնում են Մարոն և Թաթոսը  
փանարը և Թաթոսը, վորը նվագում է իր շվին: Մարոն  
փանարը դնում է արկղի վրա և նստում է Թաթոսի կողքին.  
Մարոն ծոցից հանում է ցուցակ և կարդում: «Սարգիս,  
Միսակ և այլն»

**ԹԱԹՈՍ**.—(յերգում է) Թե՛վս անցած Մարոն սիրուն,

Կերթանք ձորը գիմացի,  
Անուշ ժպտանք մենք մեկ, մեկու  
Սիրենք իրար և խնդանք:

**ՄԱՐՈ**.—(յերգում է) Թող քս շվին գեղեցիկ

Յերգ ու տաղով անուշիկ  
Պատմե սար ու ձորերին,  
Գաղտնիքը մտտաղ սրտերի:

**ԹԱԹՈՍ**.—Գլուխս ել հիմար չե

Ու աշխարհն ել սիրելի  
Մարոյիցս սիրուն  
Չկա այս աշխարհում:

**ՄԱՐՈ**.—Յերբ, վոր հնչեն գանդերը

Մեզ ժողովի կանչելու  
Պարապ չարեք է նստենք  
Դեպի ժողով պիտ գիմենք:

**ԹԱԹՈՍ**.—Մարո, բա էն ա մենք նստած ենք:

**ՄԱՐՈ**.—Մենք զուր տեղը չենք նստել: Մենք, ինչպես ասում են,

պոստ ենք պանում:

**ԹԱԹՈՍ**.—(նվագում է և յերգում) Պետք ասեմ՝ քեզ հայտնի

Առանց քեզ կորած էյի.  
Հեյ ջան Մարո, իմ Մարո,  
Կոմսոմոլ ջան իմ յարո:

ՄԱՐՈՒ.—Կոլխոզը մեր շատ կաճի  
Դուշմանի աչքը հանի,  
Այս ճանապարհը ուղիղ  
Դեպի սոցիալիզմ կտանի:  
Հիշում ես դու թաթոս,  
Այն ցուցակը կոլխոզի,  
Տես ինչքան է շատացել,  
Բանվոր ձեռքը կոլխոզի:

ԹԱԹՈՍ.—Կոլխոզը մեր շուտ կաճի  
Դուշմանի աչքը հանի,  
Այս ճանապարհը ուղիղ,  
Դեպ սոցիալիզմ կտանի:

ՄԱՐՈՒ.—(Միաժամանակ, Թաթոսի հետ. վերջին կուպլետի կարգում է ցուցակը)  
Սարգիս, Մխաի, Կիրակոս, Չաքի,  
Շողիկ Բերի, Յեղսան Բաչի ու Մուքի,  
Մարո, Կարո, Սահակ, Մկո,  
Սիրուն Մակար, վարդան Բենո,  
Հարութ, Խեչո, Պետիկ, Սաքո

ԹԱԹՈՍ.—Չուխի Հակո, Գրիգոր, Սեթո,

ՄԱՐՈՒ.—Միջակ Սարգիս, բատրակ կեկոս

ԹԱԹՈՍ.—Կոմսոմոլ թումաս ու Հերիքնաղ

ՄԱՐՈՒ.—Պառավ վարդուշ, դարբին Բենոն

ԹԱԹՈՍ.—Սահակ ապին, դարբին Հարութ-

ՄԱՐՈՒ.—Թաթոս, Մաթոս, Գեվորգ ամի:

ԹԱԹՈՍ.—Յեվ մենք մեր յեղանով, մանգաղով, ցակատով ու  
արակատորով և էս չվիով կսարքենք մի լավ կոլխոզ, և կը-  
գնամ դուզ դեպի կոմսոմոլ (Մարոն ձեռքով փակում է նրա  
բերանը)

ՄԱՐՈՒ.—Սոս, շատ հեռու գնացինք... Մոռացել ես, վոր մենք ժա-  
մերը հաչվելով սպասում ենք...

ԹԱԹՈՍ.—(մեղմ նվագում է և յերգում)

Մարո քո ցուցակը լավն է,

ՄԱՐՈՒ.—Այստեղ նստած հաչվելը դժվար է:

ԹԱԹՈՍ.—Միայն ետտեղ դու մոռացել ես

ՄԱՐՈՒ.—Ասա տեսնեմ եղ ով է:

ԹԱԹՈՍ.—Թե կարող ես ինքդ հիշի,

ՄԱՐՈՒ.—Վոչ վոքի չեմ մոռացել վոչ վոքի:

ԹԱԹՈՍ.—Մեծ եչը ախոռումն էս թողել,

ՄԱՐՈՒ.—Կուլակ Աղաբեգին եմ բաց թողե՞լ:

ԹԱԹՈՍ.—Կուլակի մենք վրակոթին,

Կտանք կհանենք հողին,

Կոլխոզ խցկվող կուլակին

Գիթը կկոխենք ցեխի մեջ:

ՄԱՐՈՒ.—Բա էլ ո՞ւմ ենք մոռացել

Վոր ցուցակում չենք դրել:

ԹԱՌԱՆ.—Մոռացել ենք թարլանին

Են աժդահա գոմեշին:

ՄԱՐՈՒ.—Հա', հա' հա

ԹԱԹՈՍ.—Հա', հա', հա',

ՄԱՐՈՒ.—Հայտնի լինի թող թաթոսին

Վոր չենք մոռացել թառլանին:

ՅԵՐԿՈՒՍՈՎ.—(ծիծաղում են) Հա', հա', հա',

Մենք կգրենք թառլանին

Են աժդահա գոմեշին!

ՄԱՐՈՒ.—Միայն գիտես ինչ՞ կա թաթոս, մենք նրան նոր անունով  
պիտի գրենք...

Անունը գնենք...

ԹԱԹՈՍ.—Կոլխոզի գիզանդ:

ՄԱՐՈՒ.—Ճիշտ ես ասում ես պես էլ կգնենք գիզանդ:

ԹԱԹՈՍ.—Դուրս յեկավ կարմիր կնունք:

ՄԱՐՈՒ.—Դե յես ուշացա, պետք է գնամ:

ԹԱԹՈՍ.—Սպասի

ՄԱՐՈՒ.—Թե չե եղ մուկը ձեռքերիցս կփախչի:

ԹԱԹՈՍ.—Սպասի յես քեզ մի բան պիտի ասեմ— (ծոցից հանում է  
մի ծաղկանկար գլխի քաշկիմակ:) Ահա քեզ նվեր... և  
բոլորը...

ՄԱՐՈՒ.—Այ քեզ բան, ետքան հարուստ ես յեղել թաթոս: Թանգար-  
ժեքն է. ետքան փող քեզ վորտեղից է թաթոս:

ԹԱԹՈՍ.—(չփոքված) աշխատել եմ...

(Մարոն լուռ ժպտում է. նայում է Թաթոսին. հանկարծ  
գրկում է նրան համբուրում և փախչում է) Այ, քեզ հար-  
վածային տեմպ (չբեղով) Ախ', Մարո (նստում է և մեղմ

կիազում «քեզն անցած Մարտն սիրուն» և այլն, դուրս  
կամաց բացվում է և ներս է մտնում Սոնան։)

**ՍՈՆԱ.**—(կամաց) *Եստեղ ես՝...սպասում ես հա՞...ինչ հչառ-  
պահն ես...դե յես ել ժամանակին յեկա. ճիշտ կես դեռեր  
է (փակում է դուռը)*

**ԹԱԹՈՍ.**—*Յերազ ա՞...չունչս կարվում է...Մորքուր Սոնա, չե՞ս  
իմանում, թե ինչքան եմ յես ուրախ։ Սատանենք քեզ առնի՛  
նաիր կողքես, քեզ համար մի բան ասեմ՝*

**ՍՈՆԱ.**—*Գիշերները քեզ համար թաթոս ջան  
Չունեմ հանդիսա քուն դազար։*

**ԹԱԹՈՍ.**—*Քեզ նման յես ել Սոնա ջան  
Յերազումս տեսնում եմ նրան,  
Եսպես հանկարծ, վոր սատանան,  
Քեզ ուղարկեց իմ դռան։*

**ՍՈՆԱ.**—*Այդ ինչ ես ասում այ թաթոս,  
Չե, վոր դու ապացիր դեռերը  
Կապասեմ քեզ մեր ամբարում.  
Հիմա եղպես ես՞ ընդունում։*

**ԹԱԹՈՍ.**—*Սոնա թող ու հեռացիր ետեղից  
Քանի դեռ չուտ է չեմ վիշել հողիս։*

**ՍՈՆԱ.**—*Գժվել ես ինչ է՞ այ թաթոս  
Բամբի պես կքանդեմ չարս կողմս։*

**ԹԱԹՈՍ.**—*Քանի կանգնած ես դեմս հանդիման,  
Պեաք է կորչեմ յես անդյումս  
Ու կխեղդեմ ինձ ես թոկով  
Յեթե չգնաս այտեղից խաթրով։  
(Դուռը բացում են)*

**ՍՈՆԱ.**—*Այ քեզ բա՛ն, եդ, ով ա դուռը թակում։*

**ԹԱԹՈՍ.**—*Ով պիտի լինի, քո մարդն է (հայտնում է) Աղաբեդ! այդ  
դու յես՞...*

**ԱՂԱԲԵԳ.**—*Յես եմ թաթոս ջան, յես եմ, չուտ դուռը բաց արա։*

**ՍՈՆԱ.**—*Վա՛յ ինձ, (շփոթված)*

**ԹԱԹՈՍ.**—*Ես սհաթիս, Աղաբեդ, ես սհաթիս...  
Սոնա, մտիր մեշուկը, թե չե կորած ենք, կմորթի քեզ,  
ձեռքին սեփուխը կա։*

**ՍՈՆԱ.**—*Յա, սուբբ Մարիամ աստվածածին, դու փրկես ինձ (խա-  
չակնեխով մտնում է մեշուկը։)*

**ԹԱԹՈՍ.**—*Վուչ մի ծպտուն չհանես, և չչարժվես, թե չե քեզ կծակ-  
ծկեմ։ (մեշուկի բերանը կապում է և դուռը բաց անում.  
Մտնում է Աղաբեդը։)*

**ԱՂԱԲԵԳ.**—(կասկածելով) *Այստեղ մեղմից դաս ել, մարդ կա՞...*

**ԹԱԹՈՍ.**—*Կա՞!...*

**ԱՂԱԲԵԳ.**—(ցնցվելով) *Ով ա՞ ով՞...*

**ԹԱԹՈՍ.**—*Թառլանը։*

**ԱՂԱԲԵԳ.**—(մեղմ) *Բա ուրա՞ թաթոս ջան։*

**ԹԱԹՈՍ.**—*Մեշուկումը։*

**ԱՂԱԲԵԳ.**—(վազում է դեպի մեշուկը, շոշափում և ուրախ ծիծա-  
ղում է) *Սաչ ա սաչ, իմ թառլանս, հա՛, հա՛, հա՛, հա՛, ...  
ս ս՛ ընած ա չղարթնի, թող քնի...Ճանապարհը յերկար  
ա... լավ, վոր կարողացա հետս փողս վերցնել, թե չե քեզ  
կերակրելու ջան չեր լինի, թառլան ջան! (յերգում է)  
Քեզ շեմ տա յես կոլխողին, թառլանս  
Իմ ապավեն, իմ ապրուստս, թառլանս  
Կտանեմ քեզ մի ուրիշ տեղ, թառլանս  
Կապրեմ քեզ հետ իմ հողի ջան, թառլանս։*

**ԹԱԹՈՍ.**—(յերգում է. կողմ) *Իշտահիդ, դու քացախ ցանիր Աղա-  
բեդ։  
Կրթիդ խողի տեղ ընդունիր Աղաբեդ։*

**ԱՂԱԲԵԳ.**—*Այնվացեղ իմ աչքի լույս գեղեցիկս,  
Տասնյոթ փթանոց իմ ջանիկս  
Խողերի մեջ ցար, թագավոր պարծանքս,  
Իմ մխուճար, իմ ապավեն թառլանս։ (շոյում է մեշուկը)*

**ԹԱԹՈՍ.**—(կողմ) *Սոնեն փոխում ես դու խողիդ հետ  
Թառլանը գնա՛ց գեղի կոլխողի հետ։*

**ԱՂԱԲԵԳ.**—*Կթողնեմ կինս, տունս տեղս իմ թառլանս,  
Կմնամ չոր հացի կարոտ թառլանս,  
Բայց քեղանից յես բաժանվել չեմ կարող  
Իմ աչքի լույս իմ ապավեն թառլանս։*

**ԹԱԹՈՍ.**—*Ինչքան հիմար ծիծաղելի յե ես մարդը  
Վոր իմանա սրտաճաք կլի ես մարդը։*

**ԱՂԱԲԵԳ.**—*Շարժվեցիր՞, գարթնեցիր՞, ջա՛ն! հողի ջան. (խամբու-  
րում է մեշուկը) Ականջները չարժում ես, եսա քեզ խոտա  
կանեմ...դուր չեկա՛վ, խի՛! խի՛, խի՛, խի՛, դե թաթոս*

Հան վերջնենք դուրս տանենք: (տանում են մեշոկը բեմի խորքը:) Թաթոս, կասես Թառլանին քաշը պահատած **բեմ**:

**ԹԱԹՈՍ**. — Ձե, Աղաբեգ, դա մեր ուժն է ավելացել:  
(Մտնում են վարդանովը փակարը ձեռքին, Մարգիս և Մարոն, Յեղսան քաջի ու կոլխոզնիկներ. շրջան են կազմում մեշոկի և Աղաբեգի շուրջը. վարդանովը փանարի լույսը գցում է Աղաբեգի վրա: Աղաբեգը գայրույթից դողում է, շնչում է բերանով, վորը լայն բաց է արել... Թաթոսը մեշոկը բարձրացնում է վոտի վրա, Սոնան կանգնում է: Աղաբեգը չնկատելով այդ «տարորինակ յերեվույթը» վազելով գրկում է մեշոկը:)

**ԱՂԱԲԵԳ**. — Իմն է իմը, սեփականս...  
**ԹԱԹՈՍ**. — Գոնն ել կուլակ քոնը, վերջուտ մեզ հարկադոր չե:

**ԱՂԱԲԵԳ**. — (հասկանալով) Դու, դու, Թաթոս, ինձ Թառլակ դեցես... (հանում է դանակը) կոպանեմ Թառլանին, բայց մեզ չեմ տա... (շարժում է դանակը:)

**ՍԱՐԳԻՍ**. — (վերցնում է նրա ձեռքից դանակը) մի տաքանա Աղաբեգ, դուր ե...  
**ԱՂԱԲԵԳ**. — (Գրկելով մեշոկը,) Ձեմ տա Թառլանին... դարաններ, դեղեր... դիշերը... կլավեն մեզ Թառլան ջան...

**ՎԱՐԴԱՆՈՎ**. — (խիստ և հրամայողաբար) Դե բաց արեք մեշոկը...  
Շուտ հարվածային կարգով:  
(Աղաբեգը վախվխելով բաց է անում մեշոկը)

**ԲՈՂՈՐԸ**. — (հետ գնալով) Սոնան է, Սոնան...  
**ԱՂԱԲԵԳ**. — (խաչակնեփելով) Աստված իմ... լիկ—վի—գա—ցիա արին:

(Աղաբեգը և Սոնան. կանգնած են անշարժ իրար կողք կողքի: Այդ դիրքում մնում են մինչև ներկայացման վերջը:)

**ՎԱՐԴԱՆՈՎ**. — (հասարակույթյան) Ընկերներ, կուլակը հասարակ թշամի չե... ինչպես տեսաք ուղում եր կսլեկալվի գործը քանդել, բայց ընկավ Թակարդը:

**ՅԵՂՍԱՆ ԲԱՋԻ**. — Ուղում եր փախչել  
**ՄԱՐՈ**. — Խցկվեք մի կոլխոզ  
**ԿՈՒՄԲԸ**. — Գտան մորթով դայերեց  
Դու կոլխոզնիկ հետացիր  
Ու պոստումդ արթուն կաց

Յեվ կուլակից հետո կաց:  
Դարձանացան քանդել ուղեցին  
Մեզ գինաթափ: անել ուղեցին,  
Կոլխոզին տանք թեվ ու թիկունք  
Մեր պոստերում լինենք արթուն:

(Վարագույր)





«Ազգային գրադարան»



NL0310911

12132

4800

ԳԻՆԸ 40 ԿՈՊ. (3½ Վ.)

807

181

181



Լ. МИЗОНДРОНЦЕВ и И. ЦЫНОВСКИЙ

Х Р Я К

Госиздат ССР Армении  
Эривань—1931